




ՄԱՍԻՆ

ԿԻՍԱԿՄԱՇԱՅ  ԳԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ



ՏՆՕՐԷՆ—ԵՄԲՍ.ԳՐԱԳԵՏ

ՄԻԲԱՅԷԼ ՇԱՄՏԱՆ ՃԵԱՆ



ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԻՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆիկնաննըրար Եօզուշու, Կ. Պոլիս

Թ Ի Ի 13 . Բ Ո Վ Ա Ն Դ Ի Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄԵՐ ՎԱՂՈՒԱՆ ՍԵՐՈՒՆԻԸ
ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ
ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐ (Շար.)
ՀԷՆՐԻՔ ԻՊՍԷՆ
ՆԻԻԹԻՆ ՁԱՅՆԸ (Բանաստեղծութիւն)
ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ
ՍՊԱՍՈՒՄ (Բանաստեղծութիւն)
ՎԱՀԱՆ ԹԷՔԷԱՆ
ՀԷՆՐԻՔ ԻՊՍԷՆ (Ուսումնասիրութիւն)
ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ
ԳՐԱԿԱՆ ԴԻՄԱՍՏՈՒՆԵՐՆԵՐ
Յղիս Տեմիրճիպաշեան
ՄՐՏԱԷԼՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՎԱՐԴԱՎԱՌ, ՎԱՐՁՔԴ ԿՍՏՍՐ
(Նորաշէպ)
ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ
ՏՐ. Մ. ՎԱՀԷ
ԳԵՂԱՐՈՒՆԵՍՆԵՐԸ
Ռուսական գրականութեան
ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

Տեղի անձկութեան պատճառով Բը-
լեմէի «Մայրը իբր կրքիչ»ին շարունա-
կութիւնը յաջորդ բուով:

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ

Կը խնդրուի բոլոր Պատ. գործակալներէն և բաժանորդներէն, որպէս
զի վրաժան շուտով մեզ զրկել երկրորդ վեցամսեակի բաժանորդականները,
ասով նիւթապէս չի վնասելու համար մեր ձեռնարկին: Յետոյ կը խնդրուի
նաև բոլոր այն գործակալներէն և բաժանորդներէն, որոնք տակաւին անց-
եալ վեցամսեակի հաշիւները չեն կարգադրած, որպէս զի հաճին անյապաղ
իրենց հաշիւները մաքրել, նկատողութեան առնելով որ թերթերու վար-
չութիւնները վարկի հաստատութիւններ չեն, որպէս զի կարող ըլլան տա-
րին տասներկու ամիս ապառիկ թերթ զրկել:

Խմբագրութեանս մէջ ստացուած են հետեւեալները.

ԼՈՒՄԱՅ, ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ. Զորքորդ Տարի, Դերք Բ. Յու-
լիս 1899:

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ (1898-1899) Վիեննական Միթթաբեանց
վարժարանին Ի Կ. Պոլիս (Պանկաղի), հաստատուած 1857 ին:

ԲԵՐԹՈՒԱԾՆԵՐ. Գրեց Յակոբ Եագոյեան, տպագրութիւն Աթթերի,
Կ. Պոլիս:

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՄԱՍԻՍ, Ա. ՎԵՅԱՄՍԵԱԿ, 392 մեծագիր էջերով, հոս
բովանդակութեամբ հատոր մը. կը ծախուի 25 Դրշի, խմբագրատան
մէջ: Դաւառներէ և արտասահմանէ ուղղորդները պէտք է վճարեն
5 Դրշ. ևս, իբր թղթատարի ծախք:

«ՄԱՍԻՍ» Ձեռնիքի ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ 2 ԴՐՇ.

Մասիսի վերաբերեալ ամէն նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել
թերթիս անօրէն-խմբագրին:

ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

Stamboul, Bible House, Imprimerie H. Matteosian

Սրամպուլ, Պապուլ Հաւու, Յ. Մաթեոսեան տպարան

Թերթիս անօրէնը անձամբ կարելի է տեսնել ա-
մէն օր ժամը 6-9, Մատթէոսեան տպարանը:

ԱՄԱՆԻՍ

ԿԻԱՍԽԱՆԵԱՅ  ԳԱՆԴԵԱ

48^{րդ} ՏԱՐԻ

— 31 ՅՈՒՆԻՍ 1899 —

ԹԻԻ 15

ԲԱՑՈՒԱԾ Է

ՔԱԾԱՆՈՐՁԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կիսամսեայ Մասիսի

Երկրորդ վեցամսեակին

Պոլսոյ Համար 22 դրշ.

Գաւառներու Համար 27 „


Արտասահմանի „ 6 ֆր.

ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ՄԻՍՅՆ ԲԱԺԱՆՈՐԴ ՊԻՏԻ ՆԿԱՏՈՒԻՆ

Բաժանորդագրութեան Համար անձամբ կամ գրով դիմել Հանդէսի անօրէնին

ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

Պայպըլ Հաուզ, Մասթիսեան սպարան
Կ. ՊՈԼԻՍ



ՄԵՐ ՎԱՂՈՒԱՆ ՍԵՐՈՒՆԴԸ

ՄԻՐԱՅԻՆ, ՇԱՄՏԱՆՃԱՆՆ



ՐՁԱՆԱԻԱՐՏՆԵՐՈՒ
քննիչ յանձնաժողովը
կը դադրեցնէ իր նիս-
տերը, որովհետեւ աղ-
դային վարժարաններու շրջանաւարտնե-
րու կողմէ գիմումներ չի կան իրեն, և
Ուսուցչական Ընտրելիներու քննող մաս-
նախումբն ալ հարկադրուած կը զգայ
ինքզինքը իրեն գիմումներէ չատերուն
իրաւունք չի տալ դպրոցներու մէջ պաշ-
տօնավարելու համար, որովհետեւ զար-
գացման ոչ մէկ աստիճանին վրայ կը
գտնուին այդ խեղճերը: Ասանք չառ-
յատկանշական երեւոյթներ են, մեր
հասարակութեան՝ զարգացման ճամբուն
մէջ կատարածին տեսակէտէն, որոնք
միանալով անտեսական և բարոյական
ուրիշ երեւոյթներու հետ, կը կազմեն
այն մեծ դժբաղդ իրողութիւնը՝ որով մեր
հասարակութիւնը անկման ընթացքի մը
մատնուած, աւելի խոր կը թաւալի տա-
կաւ, ու սերունդէ սերունդ ապասե-
րում մը, բարուց ապականութիւն մը
անյեղի կերպով կը կաշկանդէ մեր ըն-

կերութեան բարգաւաճումը, նիւթական
և բարոյական ուղղութեան մը մէջ:
Զօրաւոր հակազդեցութիւն մը պէտք է
զմեղ նիւթական և բարոյական այդ
սոսկալի գահավիժումին մէջ կեցնելու
համար: Հակառակ պարագային, մօտա-
ւոր ապագայի մը մէջ զմեզ սոսկալի
կերպով աղքատացած և բաղքերու ա-
պականութեան մէջ կատարելապէս ապա-
սերած պիտի զգանք, ու այդ, վերջ-
նական, անդառնալի պիտի ըլլայ մեզ
համար:

Ժամանակ մը կար, և այդ շատ
հեռաւոր անցեալ մը չէ, երբ մեր հա-
սարակութիւնը անտեսական բարգաւաճ
վիճակ մը կը ներկայացնէր, մանաւանդ
բաղդատելով ներկային հետ և ուր
մեր մօտաւոր ու զրական կեանքը շատ
աւելի դոհացնող էր իր ժամանակի
պահանջները, քան թէ այսօր: Մեր երկրի
անտեսական կեանքին մէջ այսօր կորնայու-
ցած ենք մեր դիրքը և գափառա-
կութիւնն ալ բոլորովին անկարող է
մեզի տալու այն ուժը, որով կրնայինք
վերստանալ մեր նախկին դիրքը, ներուժ
կեանքի պայքար մը մղելով հանդէպ
մրցակիցներու: Ասիկա ճշմարտութիւն

մըն է դժբաղդաբար, վեր ամէն վէճէ, և ոչ թէ անոր չի համադուելով, այլ լիովին գիտակցելով է որ անոր գէմ հակադդոյ գործունէութիւն մըն ալ հաւանական կը դառնայ: Բայց հակադդոյ սերունդ մը պէտք է ամէն կերպով պատրաստուած, հասուն ըլլայ, իր գործը կատարելու համար: Թերուտ, ինկած, անդոյն սերունդ մը կրաւորական գոյութիւն մը միայն ունի, հեռու հակադդելու կարողութենէ: Մեր ներկայ սերունդը, միսթարական վիճակ մը չի ներկայացներ. ամէնուն ծանօթ է արդէն այս կէտը. ամէն խելացի անհատ, նշմարած է արդէն թէ ի՞նչպէս մենք օրէ օր աղքատանալու վրայ ենք, և մոռնորապէս ալ յետադիմական ընթացքի մը մէջ մտած:

Սակայն շատ մեծ օգտակարութիւն մը չունի ներկային դժբաղդ կացութեան վրայ խօսիլ, առանց անկից ապագային համար ապրուած, փորձառութեան պտուղ խրատներ հանելու:

Ալ հերիք է որչափ որ երեւակայական դատարարակութեամբ մը, կենսականութեան ջիղը մեր նոր ծրող սերունդներուն մէջ սպաննեցինք: Ալ հերիք է որչափ որ հին բարքերու, հին մտածումներու աստուածացում մը ուղեցինք ընել, առանց փոխուելու, նորոգուելու պահանջը դգալու: Մեր երկրակիցներ և օտարներ չը սպասեցին որ մենք ալ շարժինք, և այսօր յանկարծ, մէկ անգամէն կը տեսնենք, երազէ արթնցողի մը պէս, թէ ինչքն կատարուեր են մեր շուրջ, առանց մեր գործօն մասնակցութեան:

Այս տրուած պայմաններուն մէջ ուրեմն, ի՞նչ պէտք է ընել, որպէս զի մեր վաղուան սերունդը գոնէ ինքզինքը

կարող զգայ մեր երկրի ազատ մրցման վրայ հիմնուած անտեսական կեանքին մէջ, իր կարեւոր մասը բերելու և ասով սատարած ըլլալու երկրին ընդհանուր բարգաւաճման:

Ականատես ենք այսօր թէ ի՞նչպէս օտարները հեռզհեռէ հաստատուելու վրայ են մեր երկրին մէջ, իրենց դրամի և խելքի ուժով մեր ձեռքէն շատ բաներ առնելով: Բոլոր շահագիտական ընկերութիւնները, երկաթուղիի, թրամուէյի, քարափի, կաղի, ջուրի և այլն, կազմուած են օտարներէ, և այդ ձեռնարկութիւններէն նիւթապէս օգտուողները օտարներն են: Այս երեւոյթը կայսրութեան շահերու տեսակէտէն նպաստաւոր չի կրնար ըլլալ, և պէտք է որ Օսմ. պետութեան մէջ գտնուող բոլոր ցեղերը այս ճշմարտութիւնը ըմբռնելով ինքզինքնին կարող վիճակի մը մէջ դնեն, երկրին ներկայ բոլոր պահանջներուն գիտակցելու, և յաջողին նաև իւրացնել մտածելու և գործելու այն կերպը, որով Եւրոպացիները գիտեն անանուն ընկերութիւններ կազմել և ընդարձակ գործունէութեամբ մը ժողովուրդին մէջ նոր կամ աւելի մեծ պահանջներու ծնունդ տալով, նախ իրենց նիւթական գոյութիւնը ապահովել, ու յետոյ որոշ չափով մը նպաստել երկրին ընդհանուր բարգաւաճման:

Պարզ է որ այս տեսակ գործունէութիւն մը անկարող է ստանձնել մեր ներկայ սերունդը, որ հիւժախտաւորի մը պէս ամէն օր իր կենսականութենէն մաս մը վրայ տալու վրայ է:

Մեր վաղուան սերունդը կրնար ինքզինքը կարող զգալ այդ տեսակ գործունէութեան մը նուիրուելու համար, եթէ այսօրուքնէ դիտնայինք մենք ճիշտ

կերպով անոր դատախարակութիւնը վարել, ատով իրեն տոկուն ու ձեռնէրէց նկարագիր մը տալով, ու մաքին վրայէն ալ վար առնելով այն մշտնոր զինքը հինգած, անօգուտ սովորութիւններու կը կապէ :

Ամէն երկիրներու մէջ սերունդներու բարեշրջումը դպրոցներու և տպագրութեան միջոցաւ կատարուած է: Եթէ մենք ալ կ'ուզենք որ մեր վաղուան սերունդը աւելի կենսունակ ըլլայ, պէտք է նախ բարեշրջման այդ միջոցները նպատակաշարմար վիճակի մը մէջ դնենք :

Մեր դպրոցները արդէն այսօր կարող սերունդ մը արտադրելու վիճակին մէջ չեն : «Մասիս», իր յառաջիկայ թիւերէն միովը պիտի հրատարակէ ուսումնասիրութիւն մը այն խնդրին վրայ թէ ի՞նչպէս պէտք է կազմակերպուին մեր նախակրթարանները, և դատախարակութեան ի՞նչ տեսակ սկզբունքներ պէտք է վարեն մեր կրթական պաշտօնեաները: Ինչ որ այժմ անցողաբար հարկ է շեշտել, սա է որ մեր հասարակութիւնը, մանաւանդ անոր նիւթապէս դիւրակեաց մասը պէտք է սովորի նիւթական զոհութիւններ ընել, որպէս զի մեր ժողովուրդը կրթական նոր բույի մը մէջ մտնէ, և մենք կարող ըլլանք առանց յուսախափութեան կուռ ու տոկուն սերունդի մը յառնելուն ակնկալել: Եթէ փութ կոտութիւնը չունենանք այս ամէնքը ընելու, մեր վաղուան սերունդը շատ անարիւն, շատ անդոյն և դժբերութեամբ բոլորովին անկարող սերունդ մը պիտի ըլլայ: Վաղուան սերունդի պատասխանատուութիւնը մեր վրայ կը ծանրանայ, դիւանաճիւղ չընկճուիլ այդ պատասխանատուութեան տակ ու պարտազանցները չըլլանք հանդէպ մեր զա-

ւակներուն, որոնք վաղուան սերունդը պիտի կազմեն :

Տպագրութիւնը բոլոր քաղաքակիրթ ազգերու ճակատագրին մէջ ահագին յեղաշրջում մը կատարած է: Այս ճշմարտութիւնը յստակ կերպով կ'երեւայ երբ թղթաանք այդ ազգերու զարգացման պատմութիւնը: Միայն պէտք է տպագրութիւնը իր քաղաքակիրթ ու միջոց մը դործածելը գիտնալ: Մեր ներկայ ամենօրեայ մասնաւոր բոլորովին աննպատակաշարմար վիճակ մը ներկայացնելէ աւելի, որոշ պարագաներու մէջ նոյն իսկ փաստակար ուղղութիւն մը ստացած է իր կարգ մը նկատումներովը և իր հրատարակութիւններով: Մինչդեռ անիկա, պէտք էր ընկերական կեանքի բոլոր կողմերու մասին առողջ քննադատութիւններ ու գաղափարներ ներշնչէր հասարակութեան: «Աղցաւորի օրագիրները» չեն մտցուած տակաւին, որոնց պատասխանատուութիւնը գրողէն աւելի կը ծանրանայ հրատարակողին վրայ: Պարբերական հրատարակութիւններն ալ միթիթարական վիճակ մը չեն ներկայացներ և միևնոյն ատեն այնչափ թոյլ է իրենց դժբերութիւնը որ գոնէ օգտակար ազդեցութիւն մը չունենալէ զատ, փաստակար ազդեցութիւն մըն ալ չեն ունենար հասարակութեան մտքին վրայ, աննպատակ ու անտարբեր հրատարակութիւններ միայն մնալով:

Իսկ գալով բուն ժողովրդական հրատարակութիւններու շարքին, անոնք բացարձակապէս կը պակսին մեր մէջ: Ժողովուրդին բոլոր դատակարգերուն մէջ, նկարագիր ու գաղափար ներշնչող ընթերցանութեան գրքեր չկան, և տպագրութիւնը այս ձեւին տակ ալ իր քաղաքակիրթօղի դերը դեռ կատարելու վրայ չէ մեր մէջ:

Այս ամէնքը ձախորդ պայմաններ են, որոնք ընկերապէս այնքան տկարացուցած են մեր տոհմին դիրքը ընդհանուր երկրին մէջ, և որոնք ալ աւելի անկարող վաղուան սերունդ մը կրնան տալ մեզ: Խղճահարութիւնը պէտք է ունենանք առանց դիրքի, դժբաղդ վաղուան սերունդ մը արտադրելու, և դպրոցի ու տպագրութեան քաղաքակրթող միջոցները նպատակայարմար վիճակի մը մէջ դնելէ վերջ, նաեւ ուշի ուշով հետեւինք, երկրին մէջ հետզհետէ դոյութիւն առնող ասպարէզներուն, որոնք օտարներու կողմէ սկսած են շահագործուիլ, և որոնք որպէս զի ընդհանրու ձեռքը անցնին, պէտք է որ այս վերջինները ամէն կերպով պատրաստուած ըլլան օտարներուն հետ մրցելու համար: Այդ պատրաստութիւնն է զոր պէտք է տանք մեր աղաքներուն, եթէ կ'ուզենք որ անոնք երկրորդական դիրք մը չունենան երկրին տնտեսական ընդհանուր բարգաւաճումին մէջ:

Ուրեմն հիմա, ամէն դիտակցող անհատի, մանաւանդ կոչումով այդ պարտաւորութիւնները սանցցողներու առաջին պարտքն է ճշդել դաստիարակութեան այն ուղղութիւնը զոր պէտք է տալ մեր զաւակներուն, ձեռներէյ մարդիկ դարձնելով զիրենք ընդհանուր մրցման մը մէջ, ոչ թէ իրենց արդէն ունեցած դիրքը կորսնցնելու, այլ անոր մէջ աւելի ամրապնդուելու համար: և միւս կողմէն ալ դիմել այն բոլոր միջոցներուն, որով մեր ժողովուրդը առիթը կ'ունենայ նոր ու օգտակար դաստիարակներ լսելու, և անոնց յամառ կրկնութեանը մէջ, իրեն համար հաւանական կը դառնայ զանոնք իւրացնելը:

«Մասիս»-ի խմբագրութիւնը իր բոլոր աշխատակիցներով, արդէն ամէն կերպով դիտակցած է այս ամէնուն և իր մասին միշտ նպաստողը պիտի ըլլայ, իր յօդուածներով բարբերու և դադափարներու այդ բարեշրջումը դիւրացնելու համար:

Ո Ւ Ր Ո Ւ Ա Կ Ա Ն Ն Ե Ր (*)

ՀԵՆՐԻԻԲ ԻՊՍԵՆ

Օսլյաշ. Կրնա՞ք ըսել թէ ես ե՞րբ եւ որ արուեստագէտներու շրջանակին մէջ անբարոյականութեան հանդիպած եմ:

Բաւթուր Մ. Ոչ. փառք քեզ Աստուած որ չեմ գիտեր:

Օսլյաշ. Այն ատեն ուրեմն ինքզինքդ ազատ կը դնամ, ադ ամէնը ձեզի պատմելու:

Անբարոյականութեան հանդիպած եմ ես մեր իրր բարոյականութեան տիպար նկատուած ամուսիններէն եւ ընտանիքի հայրերէն մէկին կամ միւսին քով, որ մինչեւ այն տեղուանքը ինկած է, ինքն իր գլխուն սանկ քիչ մը ժամանակ անցընելու, . . . և յետոյ արուեստագէտներուն պատիւ ընելու համար, զիրենք իրենց զուարճութեանց ատեն այցելելով: Ահա՛ այդ պարագային էր որ կրնայինք

(*) Տէս Թիւ 12, 13-14:

բան մը սովորիլ : Այդ պարունները մեզ այն տեսակ բաներու եւ տեղերու մասին պատմութիւններ կ'ընէին , որոնց վրայօք երազներնու մէջ անդամ երբէք բան մը տեսած չէինք :

Բասթոր Մ. Ի՞նչ , իրա՞ւ ըսել կ'ուզէք որ , այդպէս ամուսնացած մարդիկ դուրսը . . .

Օսվալտ. Բնաւ չէ՞ք լսած թէ ի՞նչպէս այդ ամուսնացած մարդիկը իրենց վերադարձին , արտասահմանի մէջ հետզհետէ աճող անբարոյականութեան մասին կը խօսին :

Բասթոր Մ. Այո՛ , ընտկան է . . .

Տիկին Ա. Ե՛ս ալ լսած եմ այդ բանը :

Օսվալտ. Այո՛ . կատարեալ վատահում թեամբ կարելի է իրենց հաւատալ : Երբեմն իրազեկ անձեր են իրենք : (Ձեռքը փոխադրելով Օ՛ . . . արտասահմանի մէջ եղած այդ զեղեցիկ ու ազատ կեանքը այդպէս ցեխի մէջ թաթխել :

Տիկին Ա. Այդչափ մի բարբաբիւր , Օսվալտ , միասակար է քեզի :

Օսվալտ. Իրաւունք ունիս , մայր : Կը վնասէ ինծի , կը տեսնե՞ս . այս թշուառական յոգնութիւնն է : Կէս օրուան ճաշէն առաջ պզտիկ պտոյտ մը կ'ուզեմ ընել տակաւին : Ներեցէք , Պարոն Բասթոր . դուք չէ՞ք կրնար երեւակայել , բայց ասիկա զիս նորէն վերի վայր բրաւ : (Սքզիւնք երկրորդ դասին դէմ չէլէ) :

Տիկին Ա. Խեղճ դաւակա . . .

Բասթոր Մ. Այո՛ , պատճա՞ռ ունիք այդպէս ըսելու : Ուրեմն այսչափ յառաջացե՛ր է :

Տիկին Ա. (Իբե՛ն ի՛նչո՛յէ և ի՛նչո՛յէ) :

Բասթոր Մ. (Վեր լաւ պարեւել) Ինքզինքը կ'օրոտած որդին կ'անուանէր : Այո՛ , դժբաղդաբար , դժբաղդաբար :

Տիկին Ա. (Մէ՛շու երեւո՛ւ ի՛նչո՛յէ) :

Բասթոր Մ. Դո՛ւք ի՞նչ կ'ըսէք այս ամէնուն :

Տիկին Ա. Կ'ըսեմ թէ Օսվալտ իրաւունք ունէր իր իւրաքանչիւր բառով :

Բասթոր Մ. Իրաւո՞ւնք : Իրաւո՞ւնք , այդ տեսակ սկզբունքներով :

Տիկին Ա. Այստեղ , իմ առանձնութեանս մէջ միեւնոյն կերպով մտածելու եզրակացութեան հասած եմ , Պարոն Բասթոր : Բայց ոչ

մէկ անգամ չէի համարձակեր այդ մասին խօսելու : Ասկից վերջ ազատ իմ տեղս պիտի խօսի :

Բասթոր Մ. Դժգոհութեան արժանի կին մըն էք դուք , Տիկին Ալվինկ : Բայց լուրջ բան մը պիտի ըսեմ հիմա Ձեզի : Այս վայրկեանին Ձեր գործերը վարողը , Ձեր խորհրդատուն , Ձեր եւ Ձեր վախճանած ամուսնոյն երկուստարկութեան բարեկամը չէ որ Ձեր առջեւ կանգնած է : Քահանան է ան : Ինչպէս որ Ձեր կեանքի ամէնէն ծանր պարագաներն են Ձեր առջեւ կը կենար :

Տիկին Ա. Եւ ի՞նչ է քահանային ինծի ըսելիքը :

Բասթոր Մ. Նախ պէտք է Ձեր յիշողութեան զիմեմ , Տիկին Ալվինկ , Ասիթը շատ յարմար է : Վաղը Ձեր ամուսնոյն մահուան տասներորդ տարեդարձն է , վաղը ողորմած հոգիին արձանը պէտք է բացուի , վաղը հաւաքուածներու ամբողջ երամակին պէտք է խօսիմ . . . Բայց այսօր Ձեզի հետ առանձին կ'ուզեմ տեսնուիլ :

Տիկին Ա. Շա՛տ աղէկ , Պարոն Բասթոր , ըսէ՞ք ըսելիքնիդ :

Բասթոր Մ. Կը յիշէ՞ք , թէ Ձեր ամուսնանալէն հազիւ տարի մը վերջը կը դառնէիք անդունդին բոլորովին եզերքը , թէ կը ձգէիք Ձեր տունը , եւ ամուսնական յարկը . . . թէ Ձեր ամուսնոյն ձեռքէն կը փախէիք . . . այո՛ , Տիկին Ալվինկ , կը փախէիք , կը փախէիք , եւ կը մերժէիք իրեն վերադառնալու , որչա՛փ ալ անիկա կը խնդրէր ու կ'աղաչէր :

Տիկին Ա. Մոռցա՞ք , թէ ինչպէս զրգազդ էի այն առաջին տարուան մէջ :

Բասթոր Մ. Անհնազանդութեան ողին է ուղղակի որ այս կեանքի մէջ միշտ երջանկութեան կը ձգտի : Ի՞նչ իրաւունք ունինք իսկապէս , մենք մարդիկս երջանիկ ըլլալու : Ո՛չ , մենք պէտք է մեր պարտաւորութիւնը կատարենք , Տիկին Ալվինկ , եւ Ձեր պարտաւորութիւնն էր , Ձեր ամուսնոյն քով մնալ , զոր անգամ մը ընտրած եւ որուն որդան կապով մը կապուած էիք :

Տիկին Ա. Շա՛տ աղէկ զիտէք դուք , թէ Ալվինկ ի՞նչ տեսակ կեանք մը կ'անցընէր այն ժամանակ . ինչ տեսակ պարտադանցութիւններով բռնաւորուած էր :

Բաւթոր Մ. Դժբաղդաբար գիտեմ, թէ ինչ տեսակ զրոյցներ կը չըլէին իր մասին, եւ ես վերջինն եմ որ ուղէի համաձայն գըտնուիլ, իր երիտասարդութեան անցուցած կեանքին: Բայց կին մը դատաւոր նշանակուած չէ իր ամուսնոյն վրայ: Ձեր պարտքը պէտք էր եղած ըլլալ, համակիր ոգւով կրեւոր ան խաչը, դոր բարձրագոյն կամք մը Ձեր վրայ կը դնէր: Բայց ասոր փոխարէն Դուք ապերազան կերպով կը նետէք Ձեր վրայէն այս խաչը, կը լքանէք մոլորողները, որոնց ամէնէն աւելի պէտք էիք օգնել. պարզապէս կ'առնէք կը քալէք Ձեր բարի անունը եւ Ձեր կոչումը վտանգի ենթարկելով, եւ... ուրիշներուն կոչումին հետ ալ խաղալու ընթացքին մէջ զրկեթէ կ'իյնաք:

Տիկին Ա. Ուրիշներու: Հարկաւ ըսել կ'ուզէք ուրիշի մը:

Բաւթոր Մ. Ձեր կողմէ բոլորովին անհաշիւ բան մըն էր, իմ քովս ապաստանարան փնտռելը:

Տիկին Ա. Մեր քահանայի՞ն քով... մեր տան բարեկամին:

Բաւթոր Մ. Նոյն իսկ այդ պատճառաւ... այո՛: Շնորհակալ եղէք Ձեր տիրոջ եւ Աստուծոյ, որ ես պէտք եղած հաստատամտութիւնը ունէի... որ ես կրնայի զՁեզ ձեր բոլոր որոշումներէն ետ կեցնել, եւ որ ինձ արուած էր, զՁեզ նորէն պարտաւորութեան ճամբուն մէջ առաջնորդելու, Ձեր ընտանեկան յարկին տակ... Ձեր օրինաւոր ամուսնոյն:

Տիկին Ա. Այո՛, Պարոն Բաթոր: Անտարակոյս ատիկա Ձեր գործն էր:

Բաւթոր Մ. Ես Բարձրելոյն ձեռքին մէջ միայն համեստ գործիք մըն էի: Եւ միթէ ձեր կեանքի յաջորդ բովանդակ օրերուն օրհնութիւնը չեղաւ, որ ես կը յաջողէի զՁեզ պարտաւորութեան եւ հնազանդութեան չուծին տակ խոնարհեցնելու: Այնպէս չի պատահեցաւ միթէ, ինչպէս ես նախապէս Ձեզ ըսած էի: Ալլիինկ միթէ իր մոլորութիւններէն չի դատուեցաւ, ճիշդ ինչպէս մարդու մը վայել է: Այն ատենէն ի վեր իր օրերը Ձեզի հետ սիրոյ մէջ եւ առանց յանդիմանութիւններու չէր անցըներ միթէ: Միթէ ամբողջ յիշակայքի բարեւարը չէր դառնար, եւ զՁեզ

ալ այնպէս մը իրեն չէր բարձրացնէր, որ Դուք ալ տակաւ իր բոլոր ձեռնարկութիւններուն միասին աշխատողը կ'ըլլայիք, եւ այն ալ կարող աշխատակից մը... օ՛, ես գիտեմ, Տիկին Ալլիինկ, փառքը Ձեզ պիտի թողում... բայց հիմա կեանքի մէջ Ձեր առած երկրորդ սխալ քայլին կուգամ:

Տիկին Ա. Ի՞նչ ըսել կ'ուզէք ասով:

Բաւթոր Մ. Եւ այնպէս, ինչպէս որ Դուք այն ատեն կ'նոյ մը պարտաւորութիւնները կ'ուրանայիք, անկից ի վեր կ'ուրանաք նաեւ մօր մը պարտաւորութիւնները:

Տիկին Ա. Ա՛յ...:

Բաւթոր Մ. Ձար խորհուրդներով յղի ոգի մը ինքնահաւանութեան, զՁեզ Ձեր բովանդակ կեանքի միջոցին վարած է: Ձեր բովանդակ միտքը եւ ընթացքը առանց ստիպման, առանց օրինական տրամադրութեան եղած բաներու համար էր: Երբէք կարող չէք եղած ստիպումով բան մը տանիլ: Ամէն ինչ, որ զՁեզ աշխարհի մէջ սեղմած կամ ճնշած է, առանց խղճի եւ առանց հաշուի, իրեւաւ աւելորդ բան մը բաց նետած էք: Ձեզ համար հաճելի չէր այլեւս ամուսնացած կին մը ըլլալ... եւ կը լքանէիք Ձեր ամուսնը: Տաղտկացուցիչ էր Ձեզ համար մայր ըլլալ ու Ձեր զաւակը դուրս, օտարութեան մէջ կը շրկէիք:

Տիկին Ա. Այո՛, ատիկա ճիշդ է, այդ բանը ըրած եմ:

Բաւթոր Մ. Բայց ասոր համար ալ իրեն աչքին օտար կին մը դարձած էք:

Տիկին Ա. Ո՛չ, ոչ, օտար չեմ դարձած:

Բաւթոր Մ. Այնպէս եղած է՛ք, այնպէս պէտք է եղած ըլլաք: Եւ ի՞նչ վիճակի մէջ Ձեզ վերադարձած է անիկա: Աղէկ մը մտածեցէք այս մասին, Տիկին Ալլիինկ, Ձեր ամուսնոյն դէմ ոճիր մը գործած էք Դուք. ասոր Դուք ալ համոզուած էք, եւ այս պատճառաւ վարը իր արձանը կանգնել կուտաք: Բայց հիմա ալ կը ճանչնա՞ք, ինչ ոճիր որ Ձեր որդւոյն դէմ գործեցիք. թերեւս փամառակ կայ տակաւին, զինքը մոլորութիւն ճամբէն ետ կեցնելու: Դուք ալ ետ դարձէք, եւ կ'առուցէք իր մէջ ամէն բան, ինչ որ թերեւս տակաւին կարելի է կ'առուցանել: Որովհետեւ (Յուդա՞սաբ Բարձրացնել) Դուք

ճ շմարապէս, Տիկին Ալվինկ, յանցանքներով բռնաւորուած անձ մըն էք . . . այս բանը Ձեզ ըսելը պարտականութիւնս նկատեցի. (Երկար լռութիւն ըլլաւ) :

Տիկին Ա. (Կամայ էս քնդիւնք բռնելով) : Հիմա ամէն բան ըսիք, Պարոն Բասթոր եւ վաղը հրապարակաւ իմ ամուսնոյս յիշատակին պիտի խօսիք : Ես վաղը չպիտի խօսիմ, բայց հիմա, կ'ուզեմ քիչ մը Ձեզի հետ տեսնուիլ, ճիշդ այնպէս ինչպէս Դուք ինծի հետ խօսեցաք :

Բասթոր Մ. Բնականաբար, ներքի պատճառներ յառաջ պիտի բերէք Ձեր վարմունքին համար . . . :

Տիկին Ա. Ո՛չ. միայն պիտի պատմեմ :

Բասթոր Մ. Ուրեմն . . .

Տիկին Ա. Այն ամէն բաները, զորս Դուք հիմա, քիչ մը առաջ իմ եւ ամուսնոյս եւ մեր կենակցութեան մասին ըսիք, զիս, ինչպէս որ կ'ըսէք, պարտաւորութիւններու ճամբուն մէջ վերադարձնելէ վերջ . . . այդ ամէնուն Ձեր անձնական ճանաչողութեամբ հետեւած. Որովհետեւ այն վայրկեանէն, Ձեր — մեր բարեկամը եւ ամէնօրեայ հիւրը — ոտքը այլեւս մեր սեմէն ներս չէք դրած :

Բասթոր Մ. Բայց Դուք եւ Ձեր ամուսինը, անոր վրայ կը հեռանայիք քաղաքէն :

Տիկին Ա. Այո՛. եւ ամուսնոյս ողջ եղած ատենը, այլեւս հոս մեղի չեկաք : Առաջին անգամ միայն պատասպարանի խնդրոյն զործերը հարկադրեցին զՁեզ զիս այցելելու :

Բասթոր Մ. (Յաճ յայտով եւ անխորհրդ) : Հելէնէ . . . Եթէ յանդիմանութիւն մըն էր ատիկա, այն ատեն պէտք է խնդրեմ որ ազ խնդիրը փակես . . .

Տիկին Ա. . . . այն նկատումները, զորս հարկադրուած էիք ունենալ Ձեր պաշտօնին համար. այո՛. եւ յետոյ կորսուած կին մըն էի ես : Հանդէպ այսպիսի սանձարձակ կիներու, մարդ պէտք եղածին չափ զգոյշ ընաւ չի կրնար ըլլալ :

Բասթոր Մ. Սիրելի . . . Տիկին Ալվինկ, ատիկա սոսկալի չափազանցութիւն մըն է :

Տիկին Ա. Այո՛, այո՛, մէկ կողմ ձեռք ատիկա : Միայն սա ըսել կ'ուզէի որ եթէ Դուք իմ ամուսնական յարաբերութիւններուն մասին դատողութիւն ընէք, առանց

այլեւայլի, ընդհանրապէս տարածուած կարծիքներու վրայ կը կախիք :

Բասթոր Մ. Ըսենք որ այդպէս է. յետոյ :

Տիկին Ա. Բայց հիմա, Մանսէրս. հիմա Ձեզ ճշմարտութիւնը պիտի ըսեմ : Երբեք ըրած եմ, որ Դուք պէտք էիք անգամ մը տեղեկանալ այդ ճշմարտութեան : Միայն Դուք :

Բասթոր Մ. Եւ ի՞նչ է այդ ճշմարտութիւնը :

Տիկին Ա. Ճշմարտութիւնը այն է որ ամուսինս այնպէս մոլութեամբ մեռաւ, ինչպէս որ իր բոլոր օրերուն ապրած էր :

Բասթոր Մ. (Ձեռք առնելով Երկար լռութիւն) : Ի՞նչ կ'ըսէք :

Տիկին Ա. Տաճն եւ ինք տարուան ամուսնութենէ վերջ այնքան մօլի . . . իր հակումներով դռնէ . . . ինչպէս որ եղած էր Ձեր՝ զմեզ եկեղեցւոյն մէջ իրար կապելէն առաջ :

Բասթոր Մ. Եւ այդ երիտասարդական մոլորութիւնները . . . այդ անկանոնութիւնները . . . ապօրինի վարմունքը, եթէ կ'ուզէք, մօլի կեանք կ'անուանէք :

Տիկին Ա. Մեր տան բժիշկը կը գործածէր այս բացատրութիւնը :

Բասթոր Մ. Այս վայրկեանիս զՁեզ չեմ հասկնար :

Տիկին Ա. Կարեւոր ալ չէ :

Բասթոր Մ. Գրեթէ զուլաս կը դառնայ Ձեր ամուսնութեան բովանդակ միջոցին . . . Ձեր բազմաթիւ տարիներու բովանդակ կենակցութիւնը Ձեր ամուսնոյն հետ, պէտք էր ուրիշ ոչինչ եղած ըլլար, բայց եթէ վրան ծածկուած անդունդ մը :

Տիկին Ա. Ուրիշ ոչինչ : Հիմա գիտէք արդէն ատիկա :

Բասթոր Մ. Այո՛ բանը . . . ադ բանը շատ զուլաս չի մտնիր : պարզապէս չեմ հասկնար, խելքս չի հասնիր : Բայց ի՞նչպէս կարելի էր, որ . . . ի՞նչպէս այդ տեսակ բան մը ծածկուած մնաց :

Տիկին Ա. Ամէն օր իմ ալ անընդհատ մաքառումս եղած է այդ : Երբ Օսկարը ունեցանք, այնպէս մը թուեցաւ թէ Ալվինկ քիչ մը աղեկցաւ : Բայց երկար չի տեսց

այս բանը . . . և և այն ատեն պէտք էր որ ես կրկին կերպով մաքառէի , մահու և կեանքի վրայ մաքառէի , որպէս զի մէկը չիմանար , թէ ինչ տեսակ մէկն էր զաւկիս հայրը : Ու յետոյ Դուք ալ գիտէք որ Ալվինկ ինչպէս կրնար սիրտ առնել : Այնպէս կ'երեւար թէ մէկը դէշ չի մտածեր իր մասին : Ինքը այն տեսակ մարդոցմէ մին էր , որուն կոչումը աւելի լաւ է քան թէ պաշտօնը . . . : Բայց անկից վերջ , Մանուէրս . . . պէտք է որ ալ գիտնաք որ . . . այն ատեն ամէնէն սոսկալի բանը կը պատահէր :

Բաւարդ Մ. Աւելի սոսկալին քան թէ այս ամէնքը :

Տիկին Ա. Ամէն ինչ կը տանէի , թէ եւ շատ լաւ գիտէի , ինչ որ առնէն դուրս գաղտնի կերպով տեղի կ'ունենար , բայց անկից վերջ այդ գաղտնիութիւնը մեր տան չորս պատերէն ալ ներս մտաւ . . .

Բաւարդ Մ. Ինչ կ'ընէք . . . այս տան :

Տիկին Ա. Այո՛ , մեր իսկ ընտանեկան յարկին տակ : Հո՛ն , անոր մէջ (Աջ կողմէ աստիճանի դռնէն ցոյց տալով) , սեղանատան մէջ էր , ուր առաջին անգամ ես գործը կը պարզէի : Հոն բան մը ունէի ընելիք , և դուք կէս մը բաց էր : Յանկարծ լսեցի որ մեր սպասուհին ծաղիկներուն համար ջուր առած պարտէզին դուռնէն ներս , սեղանատան կը մտնէր :

Բաւարդ Մ. Յետոյ . . . :

Տիկին Ա. Ատկից անմիջապէս վերջ կը լսէի թէ ինչպէս Ալվինկ ալ ետեւէն կուգար : Ականջ դնելով կը լսէի որ ամուսինս ցած ձայնով աղջկան հետ կը խօսէր , եւ յետոյ կը լսէի . . . (Կարճ ձեռնադէմ փոխելով) Ա՛հ մինչեւ այսօր տակաւին այնպէս աղեկաւոր եւ ծիծաղելի կերպով կը հնչէ աղանջիս մէջ . . . կը լսէի իմ սպասուհիս փախուածով ձայնը « թող տուէք զիս , Պարոն Երեսփոխան , հանդարտ ձգեցէք զիս . »

Բաւարդ Մ. Ինչ անհասկանալի , անհերքելի թեթեւամտութիւն իր կողմէ : Օ՜ թեթեւամտութենէ աւելի բան մը եղած չէ ատիկա , Տիկին Ալվինկ հաւատացէք ինծի :

Տիկին Ա. Ատկից քիչ վերջ կ'իմանայի այն բանը որուն պէտք էի հաւատալ : Երեսփոխանը կը գործադրէր իր կամքը անղկան

մասին . . . և և այս յարաբերութիւնը իր հետեւանքը ունեցած է , Բասթոր Մ. (Բարացած է պէս) եւ այդ ամէնքը այս տանը մէջ , Այս տան մէջ :

Տիկին Ա. Այս տան մէջ շատ բան քաշած եմ : Եւ զինքը իրիկունքը տունը պահելու համար . . . գիշերը . . . ստիպուած էի վերը , իր սենեակին մէջ առանձին ժամանակ անցընել , Հոն պէտք էր առանձին իրեն հետ նստիլ , իրեն հետ բաժակ բաժակի դարձել եւ խմել , իր անխմած խօսքերուն մօտիկ ընել , իմ բոլոր ուժերս լարելով իրեն հետ մաքառել , զինքը քաշկռտելով անկողին տանելու համար . . . :

Բաւարդ Մ. (Յնդէլով) Եւ այս ամէնքը կարող էիք տանիլ :

Տիկին Ա. Պզտիկ մանչ ունէի , որուն համար կը տանէի այս ամէնքը : Բայց շուտով վերջին նախատանքը տեղի կ'ունենար , երբ իմ իսկ սպասուհիս . . . : Այն ատեն ինքն իրեն ներդուր ըրի , որ ամէնքը պէտք էր վերջ մը ունենար : Եւ ձեռքս առի տան մէջի բովանդակ իշխանութիւնը . . . իր , ինչպէս նաեւ ուրիշ ամէն բանի վրայ : Որովհետեւ տեսէք , հիմա զէնք ունէի իրեն դէմ . . . ինքը չէր համարձակեր ինքզինքը պաշտպանելու , այն ատեն էր որ Օսկար դուրս կը խրկուէր : Արդէն իր եօթներորդ տարին կը թեւակոխէր եւ կը սկսէր հետաքրքիր ըլլալ եւ հարցումներ ուղղել , ինչպէս աղաքները սովորաբար կ'ընեն : Մանուէրս , այս ամէնքը անորանի էր ինծի համար : Ինծի այնպէս կուգար , որ աղան թոյն պիտի ծծէր , քանի որ այս փրճացած , անիծուած յարկին տակ պիտի չնչէր : Այս պատճառաւ զինքը դուրս զրկեցի : Եւ հիմա Դուք ալ կը հաղկանաք թէ ինչո՞ւ համար պէտք չէր հոս ոսք կոխեր , այնքան ատեն որ իր հայրը ողջ ըլլար : Ոչ մէկը գիտէ , թէ ինչ քաշած եմ ես :

Բաւարդ Մ. Երտակը կեանքը իր խալթեան մէջ ճանչցած էք :

Տիկին Ա. Երտակը , համբերելու ալ բան չէր , եթէ ես իմ աշխատութիւնս չուսնայի : Այո՛ , կրնամ ըսել որ աշխատած եմ : Բոլոր այս կալուածներուն ընդարձակելը , լաւացնելը , բոլոր այն օգտակար կարգադրութիւնները , որոնց համար Ալվինկ

փառք ու պարգև կը ստանար . . . կը հա-
ւատա՞ք որ անիկա այդ տեսակ բաներու հա-
մար հետաքրքրութիւն կամ կոչում ունենար :
Ինքը որ ամբողջ օրուան միջոցին բազմոցին
վրայ կը պառկէր եւ քաղաքական օրացոյց մը
ունէր զոր միշտ կը կարդա՞ր : Ո՛չ, հիմա կ'ու-
զեմ Ձեզի սա ալ ըսել թէ ես էի որ զինքը
կը զրդէի, երբ իր լաւ ժամերուն կը պատա-
հէր, ես էի որ ստիպուած էի ամբողջ բնոր
քաշկուտել, երբ ինքը նորէն իր մոլորումնե-
րովը արեւոյթեման ու հիւանդութեան մէջ
կ'իյնար :

Բասթոր Մ. Եւ այս տեսակ մարդու մը
պատուոյ արձան մը կանգնել կուտաք :

Տիկին Ա. Ահա՛ կը տեսնէք չար խղճ-
մտանքի մը զօրութիւնը :

Բասթոր Մ. Ձար . . . Ինչ ըսել կ'ու-
զէք ատով :

Տիկին Ա. Ես միշտ այնպէս կը կարծէի
թէ օր մը ճշմարտութիւնը մէջտեղ պիտի ել-
լէ, եւ ամէն մարդ ալ անոր հաւատայ : Այդ
պատճառաւ սպաստանարանը՝ չրջած բոլոր
զրոյցները պիտի ջնջէր ու բոլոր կասկածներն
ալ պիտի փարատէր :

Բասթոր Մ. Եւ ատով անշուշտ Ձեր
նպատակին հասաք, Տիկին Ալվինկ :

Տիկին Ա. Յետոյ ուրիշ պատճառ մըն
ալ ունէի : Ձէի ուզէր որ Օսվալտ սիրելի
զաւակս, իր հօրմէն որեւէ բան մը ժառանգէր :

Բասթոր Մ. Ուրեմն Ալվինկի հարստու-
թիւնէն է, որ . . .

Տիկին Ա. Այո՛, այն զրամները զոր ես
տարուէ տարի, այս սպաստանարանին նուի-
րած եմ, այս գումարը կը կաղմնեմ . . .
կատարեալ ճշգրտեման հաշուած եմ ես . . .
այն գումարը, զոր ժամանակին Ալվինկ, սպայ
եղած ատենը իբրեւ օժիտ կ'առնէր :

Բասթոր Մ. Կը հասկնամ զՁեզ . . .

Տիկին Ա. Գնման զինն էր ատիկա . . .
Ձեմ ուզէր որ այդ ստակը Օսվալտի ձեռքը
հասնի : Ձաւակս ամէն ինչ ինձմէ պիտի
ստանայ :

(Օսվալտ Ալվինկ, աջ կողմէ երկրորդ դուռ-
նէն ներս էլ մտնէ : Գլխաւորէ եւ վերադառնալով դուռ-
քը չէր ելնէ) :

Տիկին Ա. (Ձեռքը դիմադրելով) Վերա-
դարձա՞ր արդէն : Իմ սիրելի, անուշիկ զա-
ւակս :

Օսվալտ. Այո՛. ինչ ընեմ գուրսի այս
անվերջանալի անձրեւային եղանակին մէջ .
Բայց լսեցի որ արդէն կրնանք ճաշել . ստի-
կա հիանալի է :

Ռեկինե. (Ձեռքը ծրարով մը սեղանադա-
նէն ներս մտնելով) : Տիկին Ալվինկի համար
ծրար մը եկաւ . (Տիկին Ալվինկէ կոտորայ) :

Տիկին Ա. (Այնքան ծայրագ Ռեկինեի Ման-

պէրնէն նայելով) . Հաւանականաբար վաղուան
հանդէսին երգերը :

Բասթոր Մ. Հը՛ . . .

Ռեկինե. Սեղանն ալ պատրաստ է արդէն
Տիկին Ա. Լաւ, հիմա կուզանք . միայն
կ'ուզեմ . . . (Ծրարը կ'անի թափել)

Ռեկինե. Պարոն Օսվալտ, կարմիր թէ
ձերմակ զինի կ'ուզէք :

Օսվալտ. Երկուքէն ալ : Օրիորդ Լինկս-
դրանդ :

Ռեկինե. Bien ! շատ աղէկ, Պարոն
Ալվինկ . (Սեղանադառն էլ ելնէ) :

Օսվալտ. Իրա՛ւ, աղջկան պէտք է օգ-
նել, շիշերուն խիցերը հանելու համար (Ինչ
աւելանալով կը մտնէ, որոնք դուռը ելնէ
էրէնէն կէս մը քայլ կը մտնէ) :

Տիկին Ա. Այո՛, իրաւ, ահա, վաղուան
հանդէսին երգերն են, Բասթոր Մանտէրս :

Բասթոր Մ. Վաղը ինչպէս կարող պի-
տի ըլլամ, գոհ սրտով իմ սանտարանութիւն
նըս ընել, որ . . .

Տիկին Ա. Օ՛, դուք կրնաք արդէն տա-
կէն ելլել :

Բասթոր Մ. (Յա՛ջ նայելով սրտէս զէն-
դանադանէն չէ լսուի) . Այո՛ պէտք է կատար-
ուի, քանի որ չենք ուզեր որ դալթակղաւ
թիւն մը տեղի ունենայ :

Տիկին Ա. (Յա՛ջ նայելով քայլ ոյժով) Ոչ,
բայց անկից վերջ ալ այս երկար եւ տեղ
կատակերգութիւնը կ'աւարտի : Միւս օրու
էն սկսելով ա՛լ ամէն ինչ ինձի համար է,
իրեւել թէ անիկա այս տան մէջ բնաւ ապ-
րած չըլլար : Այս տան մէջ ոչ մէկը պէտք է
ըլլայ բայց եթէ զաւակս եւ իր մայրը :

(Սեղանադառնէն վար ինչո՞ղ ախտէ մը աղ-
մուլ, միւսոյն արեւն կը լսուի) :

Ռեկինեի ձայնը. (Մուր քայլ փոփոխութիւն)
Օսվալտ, բայց Օսվալտ, խեղճ ես . թող
տուր զիս :

Տիկին Ա. (Մարտագին վար ինչո՞ղ) Ահ
(Այլ բեռնէ մը պէս կէս քայլուած դուռնէն կը
յառնէ. կը լսուի Օսվալտին հաղալը եւ երբ մը մու-
րալը . շէշէ մը խիցը հանելու վրայ է) :

Բասթոր Մ. (Յուզուած) Բայց, ի՞նչ է
ասիկա, ի՞նչ է աս, Տիկին Ալվինկ :

Տիկին Ա. (Ողորդելով ինչո՞ղ) Ուրուական-
ները : Ծաղիկներու սենեակին զոյգը . . .
նորէն կը պատի :

Բասթոր Մ. Ի՞նչ կ'ըսէք Ռեկինէն . . .
Ահն է . . .

Տիկին Ա. Այո՛, Բալիցէք : Բան մը
մի՛ ըսէք . . . (Բասթոր Մանտէրսի ինչ-
էն մտնէ եւ դառնալով քայլերը դադար
ստանալով կ'ուզէ) :

(Շարունակելի)

Ն Ե Բ Թ Ծ Ն Զ Ա Յ Ն Ը



ՆԴՈՒՍԸԳ ԳՕԼԱՆՃԵՍՆ

ՕԼ աշխուժի մ'առջև հոգիս եր տկար
Եւ կամքը չէր բընակեր իմ մէջ բընաւ,
Ժալքքածու կեզ խառնարան մը կը քնդար
Իմ սրտիս խոր, եւ երակներս անդադար
Զայն մ'ունենին գոգ կիրքի մը տակ անբաւ . . .

Եւ ըզգացի թէ այդ ձայնին դեմ, աւանդ,
Հոգիս նաև չէր կարող ձայն մ'ունենալ,
Եւ չէր կարող գալել ջարիքն անսուաղ
Որ կը կրծէր մարմինս համակ, և նուաղ
Ճիչ մ'այն ստեն բըռաւ կուրծքես սիրանալ.

Եւ ճանջցայ զայն, ջարիքն՝ որուն եմ գերի,
Զարիքն անսանձ, և ջարիքը խօյ, հըզօր,
Զայնը նիւթին որուն տակ կը խոնարհի
Ամեն վայրկեան հոգիս ջուառ, անարի,
Եւ նիւթն է լոկ որ կը տիրէ հոգւոյս խոր:

12 Փետր. 99

Ս Պ Ա Ս Ո Ւ Մ



ՍԱՀԱՆ ԹԷՔԷՆԱՆ

ՆՅԱԻ գընաց ու կը սպասեմ իր դարձին,
Ինչպէս մոմ մը հովին դեմը դողալով.
Անցորդները պատրանքով գիս ցաւցուցին.
Եւ ինչպէս մոմ մ'որուն վըրայ փըջէ հով

Ես կը հայիմ ըսպասելով իր դարձին.
Եւ կը խորհիմ. ինչպէս երկար, ձանձրացող
Թարթիջներու տակ աչքերով, առանձին
Կ'երթայ, քալուածքն գետնի փոշին հըմայող:

Որքան անուշ պիտի ըլլար իր քովէն
Քալել, յուշիկ, ճամբու մը մէջ ծաղկաշէն,
Շընչելով, լուռ, վարդերուն սիրտն անձնուէր,


Մինչ կը պատէ մութին սահանքն ալ ըզմեզ . . .
Ի՛նչ երջանիկ պիտի ըլլար, գողի պէս
Ատեն ատեն նայիլ սիրով ուսն ի վեր . . .

ՀԵՆՐԻԲ ԻՊՍԵՆ

(ԹԱՏԵՐԱԳԻՐ-ԻՄԱՍՏԱՍԷՐ)



ՄԻՐԱՅԻՆ ՀԱՄԱՆԻՆՆԵՐ



Բ.

ՌԱԶԻՆ յօդուածով մը ⁽¹⁾
պարզելէ վերջ իր աշխարհ-
հասցեցողութիւնը կեանքի
և ընկերութեան մա-

սին, ցոյց տալէ վերջ այն սկզբունքները,
որոնցմով Նորվեկիացի թատերագիր-իմաս-
տաւէրը կ'ուզէ որ մարդկային ընկերութիւն-
ները և անհատները վարուին, այս անգամ
պիտի ծանրանամ այն կէտին վրայ թէ Իպսէն
իր ընտանեկան թատերագրութիւններովը ի՞նչ
տեսակ դրական գործունէութիւն մը ունե-
ցած է.

Իպսէնի արդի կեանքէ առնուած թատ-
երագրութիւններու հիմը կը կազմէ ամուս-
նութեան և ընտանեկան կազմութեան մա-
սին իր համադրմանը, որոնք բնութեւ վը-
րայէն հողերէն հիացումներու ինչպէս նաեւ
բուն հալածանքներու աւարկայ եղած են.
Իր՝ առաջին, իրական կեանքէ առնուած
թատերագրութիւնը եղած է, ինչպէս արդէն
նախորդ յօդուածի վերջերուն կը յիշէինք,
«Սիրոյ կատակերգութիւնը», ոտանաւոր զըր-
ուած: Սոյն կտորին մէջ հեղինակը կ'երեւայ
իր ամէնէն աւելի իտէալապաշտ գրողը,
իրեն համար սիրոյ բանաստեղծութիւնը և
սրբութիւնը լքումին, մերժումին մէջ կը կա-
յանայ: Սոյն թատերագրութեան զիւցազնը
երկտասարդ գրագէտ Ֆալք, հետեւեալ կեր-
պով կը խօսի.

«Ինչպէս որ գերեզմանը յաւիտեանական
լոյսի ճամբան կը ցուցնէ,»

«Նմանապէս սէրն ալ միայն օրհնուած
կեանքի մը կ'առաջնորդէ,»

«Եթէ միայն անկա մուգին ըղձանք-
ներու կապերը խորակէ,»

«Յիշատակներու հայրենիքին մէջ ծփա-
լու համար:»

Պրանդ ալ միեւնոյնը կ'ըսէ.

Շահը կորուստին մէջ է պահուած,

Յաւիտեանապէս կը մնայ այն, որ կոր-
սուած է:

Սիրոյ կատակերգութեան մէջ Իպսէն
ամէնէն աւելի սա ուղած է շեշտել. որ նոյն
խակ նշանածներու համար սէրը արդէն իր
բանաստեղծութիւնը կը կորսնցնէ: Քանի որ
այդ երկտասարդ սրտերու գաղսնիքը ամէ-
նուն առջեւ կը փռուի արձակուեալ, և հեզ-
նողներ ու խորհրդատուներ, ազգականի ու
բարեկամի զիմակին տակ ալ կը յարձակին
իրենց վրայ: Եւ ամուսնական կեանքի ամէ-
նօրեայ կենսակցութեան մէջ, սիրոյ իտէալ
ոյժը բոլորովին կը վերնայ: Այս ճշմարտու-
թեան իր ասպցոյց Իպսէն կը ներկայացը-
նէ մեզ Սթրոման քահանան, որ իր երկա-
սարգութեան Սոնետները կը գրէր և խանդով
կիթառի վրայ կ'երգէր, բայց այսօր իր տա-
նակու զաւակներովը սովորական մարդ մը
եղած է: Միեւնոյն թատերագրութեան մէջ
ուրիշ մըն ալ ներկայացուած է, Սթիւպէր,
որ իր առաջին սիրոյ չրջանին ատեն բանաս-
տեղծական աւելնը կը զգար մէջը, բայց օ-
րիորդ Սքէրի հետ եօթը տարիէ հետէ նշան-
ուելէն ի վեր, օրուան կեանքի պահանջներու
մասին կը մտածէ և իր նշանածին հետ չէքի
մը գրեւուն կամ զայն փոխանցելուն վրայ կը
խօսի. միեւնոյն բանը ցոյց կուտայ նաեւ
Լինդ, որ իր երկտասարդական ողբերգու-
թեան մէջ, ինքզինքը կոչուած կը զգայ աշ-
խարհին հեռաւոր մասերուն մէջ միսիօնարի
պաշտօնին, բայց նշանուելէ յետոյ իր հայ-
րենիքին մէջ կը մնայ, աղջկանց վարժապա-

(1) Տես Թիւ 13—14.

նի մը դասերը աւանդելով : Բայց ասոնց դէմ հակադրութիւն մը կազմեն Ֆալք եւ ամարտաւաճ աղջիկը Սվանհիլաէ , երկու բնութիւններ , որոնք ինքզինքնին խաչալ սիրոյ մը փողփողումին մէջ կը գտնեն , եւ նոյն կը բաժնուին իրենց սէրէն , որովհետեւ ապահով չեն թէ ամենօրեայ տափակ իրականութեան սրտի կրնան յաղթել իրենց զգայուններով : Եթէ կ'ուզեն իրենց սէրը ապրիլ եւ միւսնոյն ատեն իրենց վերասլացքի ոյժը պահել , պէտք է որ այդ սէրը յիշատակի մը փոխուի :

Ուրիշ թատերագութեան մը մէջ է նորէն որ երբ կը հարցուի բանաստեղծին թէ « Ի՞նչ պէս բանաստեղծ եղար դուն . ո՞վ սովորեցուց քեզ այդ արուեստը » տնիկա կը պատասխանէ « այդ բանը չի սովորելի , ես բանաստեղծ եղայ երբ տառապանքին նուէրը ստացայ : » Նմանապէս Ֆալք կորստած սիրոյ սուզին մէջ « մաքառէ՛ եւ մերժէ՛ » խօսքով , կը կատարէ իր բանաստեղծի կոչումը : Իսկ Սվանհիլաէ , որ պէտք չէ անոր հետեւի , իր բովանդակ էութեամբ անօրինակ փոփոխութեան մը ենթարկուելով , իր ձեռքը կուտայ հարուստ մարդու մը եւ անոր հետ կ'ամուսնանայ : Ընդհանուրի ըմբռնումին տեսակէտէն որչափ ալ անհուկանալի եւ անսպասելի ըլլան սոյն թատերագութեան մէջ բոլոր պատահանքները , բայց Իպսէնի համար շատ պարզ են : Այն վայրկեանէն , երբ խաչալ սիրոյ մէջ բռնուած երկու անհատները կը տեսնեն որ իրենց խաչալը օրուան պահանջներուն հանդէպ չալիտի տեսնեն , Իպսէնի համար միայն միջոց մը կայ ազատումի , բաժանում : Իպսէնի պէս խառնուածք մը , որուն մէջ յամառ խաչալապաշտութիւն մը եւ մաքրակրօնական արիւնը կը տիրապետեն , պարզ է որ հետեւանքը բաժանումը սրտի ըլլար , երբ իրական կեանքը իր խաչալին հետ հակասութեան մէջ կը գտնուի : Խիստ ու մեղին մտածում մըն է սակայն այս , զոր ներկայ մարդկութիւնը իր բարոյական բմբռնումներովը պէտք եղած ոյժը չունի գործադրելու : « Սիրոյ կատակերգութիւնը » Իպսէնի այն թատերագութիւնն է , որ արտասահմանի բնութիւնը վրայ գրեթէ ներկայացուած չէ :

Միայն իր հայրենիքի , Նորվեգիոյ թատրոններու մէջ զայն բեմին վրայ հանած են , եւ որ ընդհանուր տաճութեան մը առարկայ եղած է , ոչ թէ ամէնէն աւելի իր ներկայացուցած գերմարդկային միջոցին համար , որչափ Սթրոման քահանայի ախպարի մասին , զոր անարգանք մը կը նկատեն հանդէպ բոլոր կղերականներուն :

Աւելի տխուր է « Ռօզմէրսօլմ » ի վերջաւորութիւնը : Հասկնալի է երբ Ռէքէկա չուզէ Ռօզմէրի հետ ամուսնանալ , պարզապէս սոսկալով անոր նախկին կնոջ ստուերէն , որուն մահուան պատճառ եղած էր , իր՝ Ռօզմէրի հետ ունեցած ապօրէն սէրովը , եւ հիմա կ'երեւակայէ որ իրենց կենակցութեան մէջ երջանկութիւն եւ հանգիստ չալիտի վայելեն բնաւ : Բայց սովորական ըմբռնումէ դուրս կ'ելլէ երբ « Ռօզմէրսօլմ » ի մէջ մահուան եւ կեանքի ինքնուրոյն գառողութիւն մը եւ սկզբունքներ Ռօզմերը եւ Ռէքէկան միասին մահուան գրկը կ'առաջնորդեն :

Իպսէնի « Նօրա » ն ալ անծանօթ սկզբունքի մը գործադրութիւնն է : Որ մեր աչքին առջեւէն կ'անցնի : Դարերու չարքի մը մէջ , մարդկային ընկերութիւնը , սիրով կազմուած ամուսնական կապ մը , նկատած է ապաստանարան մը մարդկային երջանկութեան , կեանքի վստահ հանգրուանը : Իպսէն ցոյց կուտայ որ կեանքի այդ հանգրուանը լի է ճախճախուտ տեղերով եւ անգունդներով : Կէսրի Պրանտէս խօսելով Իպսէնի մասին կ'ըսէ . « Այս բանաստեղծը կարծես մարեց վառող իւրաքանչիւր կրակ » : Փաստարան Հէլմէր , կարծամիտ մարդ մը , ընկերութեան հպարտութիւնը եւ ախպար միանգամայն , գեղադրական դարգացած ճաշակով մը . Նօրա , իր կինը ուրախ եւ զուարթ , ազու մը պէս ալ ինամակալութեան ենթարկուած : « Ա՛խ Աստուած , որքա՛ն գեղեցիկ է ապրիլ ու երջանիկ ըլլալ . » կ'ըսէ Նօրա , եւ իր ամուսնոյն վրայ իր կոյր հիացումին մէջ , չի գիտակցիր թէ ինքը միայն ամուսնոյն համար կ'ապրի , եւ այն բանը պէտք է ուզէ եւ զգայ ինչ որ կ'ուզէ եւ կը զգայ իր ամուսինը : Եւ իր այս գոյութիւնը այնքան ատեն իր փայլը եւ հրապոյրը սրտի

ուռնենայ հանդէպ մարդուն , որքան ատեն
որ Նօրա իր՝ արեւի պայծառութեամբ զը-
ւարթութիւնը եւ թարմութիւնը պահէ : Ու
այս տեսակ պայծառութեան մէջ իրօք կը
սահին Նօրաի ամուսնութեան առաջին տարի-
ները : Սեւը սակայն չուշանար իր զանդուա-
ծը ցոյց տալու այդ ընտանեկան յարկին վրայ :
Նօրա ի սէր իր ամուսնոյն , օրինական տրա-
մադրութիւններու անգիտակից , իր հօր ըս-
տորադրութիւնը կեղծած էր ժամանակին ,
եւ այսօր այդ պարտքի թուղթն է որ պէտք
է վճարուի չլիարեւելու համար ամուսնոյն
պատուին : Բայց այս պարտքան առանց զժ-
բաղդ հետեւանք մը ուռնենալու կը յարգուի :
Եթէ այս նիւթով թատրերգութիւն մը , առանց
հոգեբանական խորութիւններու , լաւատես
խառնուածքով հեղինակի մը կողմէ գրուէր ,
ապահովաբար ամէն ինչ գիրկընդիւռնումնե-
րու մէջ պիտի վերջանար : Բայց Իպսէնի
համար ինդիրը բոլորովին կը փոխուի : Իպսէն
արտաքին բարդութիւնները չէ որ միայն
խնդրոյ նիւթ կ'ընէ , այլ այդ առթիւ ծնունդ
կուտայ ներքին հոգեկան կարգ մը վիճակնե-
րու , փոփոխումներու , որոնք կը կազմուին
տակաւ արտաքին բարդութիւններու ազդե-
ցութեան տակ : Թէեւ Հէլմէր , սեւ ամպին
անցնելէն վերջը կը կակուղնայ , եւ կերպով
մը կ'ուզէ քաւել , այդ առթիւ հանդէպ իր
կնոջ ցոյց տուած անողոք վարմունքը , ա-
նոր ձօնելով իր ամէնէն սիրազեղ , ամէ-
նէն երախտապարտ համբոյրները , բայց Նօ-
րա կը զգայ որ իրենց երկուքին միջեւ յան-
կարծ անջրպետ մը գոյութիւն ստացեր է ,
որուն երկու կողմէն իրարու չեն կարող ձեռք
տալ : Նօրա , որ իր ամուսնութեան առաջին
տարիներու մանուկի անուշ միամտութեամբ ,
ինքզինքը ամբողջովին իր ամուսնոյն նուիր-
ած է , անոր համար զգալով , անոր համար
մտածելով եւ անոր համար աղբիւրով , կը
տեսնէ յանկարծ թէ ինչպէս իր ամուսինը
օգտուած է իրմէ , միայն իր անձնական հա-
ճոյքին , վայելքին համար եւ նեղ պարտա-
յին ինչպէս ցոյց տուած է Նօրաի որ իր կը-
նոջ համար զոհողութիւններ յանձն առնելու
մարդ չէ Հէլմէր : Այս ամէնքը շատ խոր կեր-
պով ազդելով Նօրաի հոգեւոյն վրայ , կ'որոշէ

հետանալ իր ամուսնոյն յարկէն : Նօրա կ'ըսէ
իր ամուսնոյն « Դուն չես մտածեր եւ չես
խօսիր այն մարդուն պէս , որուն քով ես
կրնայի մնալ : Երբ քու վախդ ա'լ անցաւ —
ոչ թէ անոր համար որ ինձ կը սպառնար ,
այլ միայն անոր համար ինչ որ ուղղակի
քեզի դէմ էր — եւ երբ ա'լ վախաւուր բան
մը չի գար , այն ատեն սկսար անանկ մը ին-
ծի նայիլ , իբրեւ թէ բան մը պատահած չը-
լար : առաջուան պէս նորէն քու թռչնիկ ,
անուշիկդ կ'ըլլայի : Այդ առթիւ միայն կը
հասկնայի որ ես ամբողջ ութը տարիներ օտար
մարդու մը հետ միասին ապրեր եմ » : « Դուն
պարտաւորութիւններ ունիս հանդէպ ամուս-
նոյդ եւ զաւակներուդ » մէջ կը բերէ Հէլմէր :
« Նոյնքան սրբազան ուրիշ պարտաւորու-
թիւններ , հանդէպ իմ իսկ անձին » կը պատա-
խանէ Նօրա :

Երբ մարդ Իպսէնի երկտառարգութեան
բանաստեղծութիւնները թղթատէ , անոնց մէջ
կը գտնէ « Սիրել , ամէն ինչ զոհել եւ
մոռնալ . անձ՝ այս է կնոջ պատմութիւնը » :
Բայց այդ բանաստեղծութիւններէն վերջ ինչ-
պէս ամէն բանի նմանազէս սիրոյ մասին
Իպսէնի գաղափարները արմատական յեղաշը-
շութեան ենթարկուած են : Սիրոյ մասին այս
յեղաշրջութիւնը Նօրան գրելէ առաջ կը տես-
նուի արդէն իր մէկ ուրիշ թատրերգութեան
« Երկտառարգութեան Կապը » ին մէջ , ուր
Սեւմաի արդարը կերպով մը նախապատառ-
տութիւնն է Նօրաին :

Նօրաի շուրջ յարուցած խնդրին մէջ , Իպ-
սէն ամէնէն աւելի կը շեշտէ անհատականու-
թեան խնդիրը , եւ այս մասին իր կարծիք-
ները շատ կէտերու մէջ կը պատշաճին Սնդ-
լիացի իմաստասէր Սթիւարթ Միլլի տեսու-
թիւններուն եւ շատ ուշադրաւ է թէ ինչպէս
մարդկային դատողութիւնը եւս միշտ նոր բու-
լերու մէջ մտնելու ենթակայ է :

Ստեն մը կար , հին բարի ատեն , ինչ-
պէս հիմա սովորութիւն եղած է ըսել , ուր
կէօթէ իր « Հէլման եւ Տորթէ »-ն կը գրէր ,
իր այդ գործով ամուսնութիւնը իբր ընտելեան
եւ Աստուծոյ կողմէ սահմանուած մարդկու-
թեան փոխադարձ մայր — յարաբերութիւնը
անուանելով , ուրկէ յառաջացած են տէր ըլլա-
լու եւ հայրենեաց սիրոյ գաղափարները եւ որոց

մէջ է ուր բարոյական եւ ընկերական կեանքի արմատները կ'երկարորին Իսկ այսօր Նօրաի մէկ խօսքը « ոչ կ'ինդ ոչ ալ մայր եմ , ամէնէն առաջ մարդկային էակ մըն եմ » մին է այն նշաններէն , որոնք կը հաստատեն թէ մարդկային միտքը իր հոսանքի ուղղութիւնը փոխած է : Տարբեր խնդիր է սակայն թէ անհատականութեան այս սրբացումը է՞ արդեօք այն ճամբան որ մարդիկը երջանկութեան կ'առաջնորդէ : Որքան որ մեծ է Իպսէնի արուեստը հարուստ դոյնով բեմին վրային միա ու արիւն մարդիկ ներկայացնելու համար մեղ , որոնք մեր աչքին տակ այնքան ներդոյժ կերպով կ'ապրին , նոյնքան նաեւ մեծ է Իպսէնի կարողութիւնը երբ իր մէկ զաղափարը , տնճի մը ձեւին տակ , աննկուն լատուութեամբ ներկայացնէ , անմոռանելի մը բովանդակ ապշութիւնը առթելով հանդիսականներուն , որոնք յաճախ հոգեբանական խորութիւնէ զուրկ են հասկնալու համար այդ ամէնքը :

Իպսէն իր բոլոր թատերադրութիւնները եղբրական կերպով վերջացնելու որոշ հակում մը ցոյց կուտայ , եւ ասիկա նուազ յատկանշական չէ Իպսէնի խմտաօրակական աշխարհայայցեցողութեան տեսակէտէն : Passarge « Նօրա »-ն ամուսնութեան եղբրերգութիւնը անուանած է :

Շատ մը քննադատներ Իպսէնի « Նօրա »-ին եւ « Ուրուականներ »-ուն մէջ կապ մը կարծած են տեսնել , անով որ երբ ընկերական բարոյականի հիման վրայ , հակառակ իրենց մէջ միշտ լայնցող անջրջեմին , այր եւ կին շարունակեն միասին տալիլ , իրենց հետեւանք կ'ունենան Տիկին Ալվինի տիպարը : Տիկին Ալվինի երբ կը տեսնէ որ անորման , մոլութիւններէ քայքայուած զինովի մը հետ կապուած է , կ'ուզէ այդ կապերը փռելու , ու ասոր համար խոյս կուտայ Բասթոր Մանաէրսի քով , զոր կրիտասարգութեանը սիրած է : Բայց Մանաէրս , որ ինքզինքը ընկերական բարոյականի ներկայացուցիչը կը նկատէ , կը համոզէ զինքը որ նորէն ամուսնոյն դառնայ : Տիկին Ալվինի կը համոզուի , ինքզինքը ընկերական բարոյականին պահանջած պարտաւորութեանը զոհելով , ա-

սով սակայն իր բովանդակ կեանքը մեծ սուտ մը դարձնելով , որուն մէջ իր ամուսնոյն մոլութիւնները եւ վատութիւնները վախէն կը պահէ ընկերութենէն եւ իր զաւկէն : Ու իր զաւակը չապականելու համար է որ զայն , եօթը տարեկան ըլլալուն , տունէն իր հօր ընկերակցութենէն կը հեռացնէ , արտասահման շրջանէն : Եւ սակայն իր անձը եւ իր երջանկութիւնը զոհ կը բերէ այս ամէնքը ընել կարենալու համար : Կուգայ օր մըն ալ ուր Տիկին Ալվինի զաւակը Օսվալտ կը վերադառնայ արտասահմանէն , մաքով եւ մարմնով հիւանդ , հօրմէն ժառանգուած զգայական հակումներով , խելագարութեան ալ սերմը դանկին տակ : Թատերադրութեան վերջին . սոսկալի տեսարան մը կը պարզուի ուր մայրը խենդեցած զաւկին ղրմացնէ , որ անհասկանալի բառեր կը մրմնջէ : Իպսէն իր այս կատար անուանած է « Ընտանեկան տուամ » : Աւելի ճիշդ պիտի ըլլար թերեւս ըսել ընտանեկան տուամ մը վերջին տեսարանը , ուր սոսկալի գանձալիւծումով ամէն բան քար ու քանդ կ'ըլլայ : Հին յունական դրականութեան մէջ Սոփոկլէսի Էօտիքը , ուր հեղինակը նմանապէս առաջին արարուածներուն մէջ տուած է բոլոր սկզբունքները , անոնց վրայ յետոյ բարձրացնելով իր վերջին տեսարանին շէնքը , այնքան դաժան :

« Հէտգա — Կապէր » նմանապէս շատ ծանր տպաւորութիւն մը կը ձգէ իր ամբողջութեամբ : Կարծեմ Նորվեգիացի քննադատ մը խօսելով Իպսէնի այս թատերադրութեան վրայ ըսած է « մարդ այն զգացումը կ'ունենայ , իբրեւ թէ երկնքի բոլոր մոլորակները կը մարին » :

Ժամանակ մը կար , ուր բանաստեղծութիւնը գեղեցիկը արտայայտելու արուեստը կը նկատուէր : Կը յիշեմ դարուս կէսերուն սպրոզ Գերմանացի խմտապետի մը խօսքը , « միայն բանաստեղծին միջոցաւ Աստուած իր կատարած արարչագործութեան տոկոսը կ'առնէ , որովհետեւ միայն բանաստեղծ մը կրնայ զայն գեղեցիկ վիճակի մէջ վերադարձնել իրեն » Բայց բանաստեղծի , գրագէտի կատարածին այս տեսակ սահմանումը պարզ է որ չպիտի յարմարէր ներկայ մարդկութեան դատողութեան եւ ճաշակին :

Անոնք, որոնք օրը օրին կեանքի մը մէջ բռնուած են համակ, անոնց մութ են քիչ մը այն բոլոր գաղափարները, զորս Իպսէն կը ներկայացնէ իր թատերերգութիւններով: « Ճարտարապետ Սոնէս » ի մէջ պատկերները եւ անձերը իրարու մէջ կը ձուլուին եւ ամբողջ գրուածքը կը ներկայանայ շատերու աչքին իբր խորհրդանշական երեւոյթ մը, զոր մարդ աւելի Ռօմանթիկ գրականութեան մը պիտի վերագրէր: Իպսէնի նորագոյն թատերերգութիւններէն մին ալ « Պղտիկ Էյօլֆ », որուն մէջ հեղինակը թէեւ ճիշդ մը ցոյց կուտայ առեղծուածային բնութիւն ու նեցուղ խղճարժեք կրներէ վեր ասոյժը ընտանեկան յարկեր կազմելու ատակ անձերու համար, բայց նորէն իր գաղափարներուն եւ պատկերներուն մէջ կարեւոր մասը կը ծածկուի մասնաւոր խորհրդէն: Իպսէն իր այս թատերերգութեամբը բան մը եւս աւելցուցած է իր դասանած գաղափարներուն վրայ, յեղաշրջման օրէնքի դաւանութիւնը եղած է այդ: « Պղտիկ Էյօլֆ » տիտղոսն ալ ոչ թէ պղտիկ հիւանդոտ Էյօլֆը կ'ականարիէ, այլ կը խորհրդանշէ այն պայմանները որոնց մէջ Ալմէրս եւ Ռիդա, երկու ամուսինները կ'ապրին:

* * *

Իպսէն իր գրական գործունէութեամբ եւ իր յայտնած գաղափարներով, արդէն յստակ կերպով կ'երևի որ մաքառման մէջ է ժառանգութեամբ եւ սխալ գաղափարակութեամբ ստացուած խեղադիւրեալ բարոյական ըմբռնումներու դէմ, թէ՛ իր ընկերային թատերերգութիւններուն « Երիտասարդութեան կապը », « Ժողովորդի թշնամին », « Ընկերութեան յենարանները », եւ թէ՛ ընտանեկան տառաքանքուն մէջ, Իպսէն իրենց կեանքը կը տեսնէ ընկերային, քաղաքային եւ բարոյական արամադրութիւններու հանգէպ ինքն իր տէրը եղող անհատականութեան մը մէջ: Իր գրական գործունէութեան նպատակը կը թուի ըլլալ մարդկային միաքր կրթել ու ատով զայն յարաճուն յուզման մը մէջ պահել, որ ուրիշ բան չի նշանակէր բայց եթէ ձգտում մը այսօրուան մասամբ ժառանգուած եւ մասամբ ալ կրթու-


թեամբ ստացուած զգալու կամ մտածելու հիմնական ըմբռնումներու ամբողջական ջնջումը:

Իպսէնի բրած գրականութիւնը այնչափ հոծ եղած է գաղափարներու տեսակէտէն, որ արուեստագէտը տեղի տուած է մտածողին: Նաեւ իր թատերերգութիւններով Իպսէն նուիրագործել ուզած է այն կարծիքը թէ թատրոնը սովորելու տեղ մըն է ժողովուրդին համար: Բայց խնդիր է թէ թատրոնը իրաւ կրնայ ըլլալ այն տեղը, ուր կարելիութիւն կայ ժամանակակից հարցերով ներկաները պատկերացնելով, օր մըն ալ զայն լսած եւ: Արդի թատրոնը, իր ներկայ կեանքէն առնուած ներկայացումներովը, եւ այդ կեանքի մասին իր նոր գաղափարներովը, սպայգ է որ բարոյական—ընկերական ըմբռնումները որոշ չափով խախտելու վրայ է, բայց բարեբու բարենորոգման մասին ներգործական դեր մը ստանձնելու գիրքին մէջ չէ այն, իր գերը միայն տնուղղակի ըլլալով:

* * *

Տարակոյս չի կոյ որ արդի թատրոնը իր իրապաշտ ձգտումներովը մեր կեանքէն պատկերներու մէջ բաժանուելով մեր հոգին, ամենէն դիւրին կերպով նոր ու կու գաղափարներ ներշնչելու յարմարագոյն օժկանը կրնայ ըլլալ: Եւրոպական ինչպէս նաեւ Ամերիկեան նոր թատրոնները, իրենց այդ դերին մէջ որոշ գիտակցութիւն մը ցոյց կուտան արդէն:


Տաճկահայ գրականութեան մէջ թատերական սեռը մտնաւանդ արդին, բնաւ չէ մշակուած: Հիները, դասականներէն ընդօրինակուած, քանի մը կտոր—բրթուճ ողբերգութիւններ աւանդած են մեզ, իսկ մենք ընդհանրապէս շատ քիչ բանի մը հետ, թատերական բացարձակապէս ոչինչ ունինք մենէ վերջիններուն տալու: Իրապաշտ կու գաղափարներով սնած թատերական սեռը մեր գրականութեան մէջ հասունութեան ջիւղ մը պիտի աւելցնէր, ու կամայ կամայ գաղափարներով աւելի լեցուն արձակի մը հետ մեր գրականութիւնը, երեւակայական, անամէջ գործունէութիւն մը ըլլալու գաղափարէն պիտի ազատէր, ընկերային զարգացման ըժանկներէն մէկը դառնալով:



ԳՐԱԿԱՆ ԴԻՄԱՍՏՈՒԵՐՆԵՐ

ՆԳԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ԱՐՏԱՇԷՍ ՕՍՐՈՒԹԻՒՆԵԱՆ



ԴԻԱ Տէմիրճիպաշեան՝
թանկագին գրողէսի մը
բոլոր հազուադիւսյա տա-
կութիւններն ու տխուր
միջակութեան մը բոլոր
ցաւալի տկարութիւն-
ները ունի ։ Ոչ ոք իրեն
չափ անհաւատար կը գած

է իրրեւ արուեստագէտ ու իրրեւ խորհող ։
Բոլոր ընդդիմակութիւններն անցած են իր
ալէկոծ հոգիին մէջէն ու բոլոր հակառակ հո-
տանքները զիրար խաչաձեւած են հոն չարա-
չար ։ Մէկ տկնարկով դժուար է ընդ-
գրկել զինքը , մատիտի քանի մը զի-
ծերով ներկայացնել իր գէմքը՝ ստուերի
նման տարտամ ու խոստափուկ՝ ու ալիքի
նման յեղեղուկ ։ Անոր համար ապշեցուցիչ
ու անախորժ անհեթեթութեան մը տալաւ-
թութիւնը կը թողէ անկեղծ ու առողջ սիր-
տերուն վրայ , մինչդեռ թելադրող ու ան-
պատճառաբանեալ հիացումով մը կը հա-
մակէ միամիտ ու զիւրահաւան միջակութիւն-
ները ։ Առաջինները՝ չեն կրնար սիրել զինքը ,
հակառակ իր բարի ու նոյն էսկ մեծ համա-
ւին ։ Իր հակասութիւնները՝ աններելի տկա-
րութիւններ են , իր իմաստասիրութիւնը՝ եր-
կիւղալի է ու վտանգաւոր , — թէեւ չառ-
սիալ պիտի ըլլար իրեն՝ ճանչնալ որոշ իմաս-
տասիրութիւն մը , — իր մատուցական իս-
կութիւնը՝ վտեմութեան մեծագոյնը պիտա-
կով՝ պատկառելի դատարկութիւն մը , — ոչ
նոյն իսկ գէթ սիրուն ու պաշտելի սնտախ
մը ։ Անոնց համեմատ Տէմիրճիպաշեանի անձ-
նաւորութիւնը մեր գրականութեան համար՝

գրական թարմատարէ մը աւելի է ։ Տէմիր-
ճիպաշեան ու Տէմիրճիպաշեանութիւն՝ ազեա-
նեւ են որ եւ է կենդանական առողջ գոր-
ծարանաւորութեան մէջ ։ Տէմիրճիպաշեանի
գոյութիւնը , իր թելադրողի գերազանց յառ-
կութիւններով , վտանգի ու մեծ մըն էր ան , — ամ-
բողջ գրական սերունդ մը դերեղմանական
խոնաւ ցանկութիւններով վառեց , Տէմիրճի-
պաշեանի իմաստասիրութիւնը , որուն ջիղը՝
մութիւն հրայրքը , մահուան սէրը , մահուան
կիրքն է , գերազանց անբարոյական իմաստասի-
րութիւնն է , — եթէ որ եւ է իմաստասի-
րութեան բարոյական արժէքը կրնանք չափել
հակամիտութեան համեմատ՝ զոր նա կը ածէ
դէպի կեանքին բնական , բնօրինաւոր , ներ-
գաշնակաւոր շղթայաշարութիւնը ։ Ու , բնա-
զանցական ցաւադարութիւններէ դուրս , ի՞նչ
բարոյական , ա՛ւելի ուժեղ է ու ամուր քան
այն՝ որ կը հիմնուի կեանքի սկզբունքին վրայ ։

Տէմիրճիպաշեան երբէք որոշ անհատա-
կանութիւն մը չէ կրցած ըլլալ ։ Մաշուած
առնականութեան մը ու պիտաւոր նողկալի
իգականութեան մը մէջ տարուբերած է միշտ ։
Երբէք , հետեւաբար , իր ինքնութիւնը չէ
կրցած դանել ։ Ամբողջ իր գրականութիւնը
Բարկենդանի երկներանդ զիմակաւորումի մը
տալաւորութիւնը կը ձգէ , ուր փոխն ի փոխ
ինքը կ'ըլլայ Գրասէր Ատում , Նուրանիա ,
Մելանիա , Թեւանիօ , Մոնադ , Հուր-Հայրան ,
Ճին-Յակոբ , Էւլնու Ատիկա կը նշանակէ թէ
նա ինքզինքը երբէք չէ կրցած դանել որոշ
ու շեշտուած ձեւի ներքեւ , թէ՛ բնաւ ինքն
իրմէն զոհ չէ կրցած ըլլալ , ու երբէ՛ք վստահ
տիրական այնպիսի յատկութիւններու վրայ՝
որոնք իր անհատական նկարագրին ինքնու-
բոյնութիւնը պիտի կազմէին ու յաւերժացը-
նէին ։

Այս դատապարտութիւններուն գէտ փառ-
տաբանութիւն մը , բայց երբէք չարամիտ
ծաղարանութիւն մը , փորձելու համար
պիտի ըսէի . Տէմիրճիպաշեան , Օտեանէն
յետոյ , առաջին ու գուցէ առաջնակարգ ար-
ձակագիր առթիւսին է մեր աշխարհիկ լեզուին
թէ եւ ո՛չ ամէնէն զուտ աշխարհաբարին
վարպետը : Ոչ ոք իրեն չափ աստուածն է
իր դիչին , այդ մոգական , առաձգական , դեր-
առաձգական փհաութին , որուն այնքան
արուեստաւոր էջեր կը պարտի մեր գրականու-
թիւնը : Տէմիրճիպաշեան , արեւմտեան հա-
յերուն մէջ , ես պիտի ըսէի մասնաւորապէս
Թլկատինցիին հետ , կամ անոր զուգահեռա-
կան մեծագոյն ինքնատիպ գրողն է մեր նոր
գրականութեան , ինքնատրպութիւն՝ ո՛չ գա-
ղափարի ու մտածման , որոնք չփոթ հակա-
սականութիւններ են յաւէտ քան յստակ մար-
գարտաշարութիւններ , այլ խեղատուութիւն
լեզուի՝ որուն յատուկ գեղեցիկագիտութիւնն
ունի , ու Քոսով՝ որուն ինքնայատուկ ար-
ուեստն ունի : Տէմիրճիպաշեանը՝ անկապաշտ
(décadent) գրող մը կը համարիմ ես՝ ոճի ու
լեզուի տեսակէտներէն , եւ այս վերադիրը
իրեն համար սոգտանք մը ըլլալէ շատ հետո-
է : Պօտըլէոի ցաւին ծաղկեցողուն յառաջա-
բանին մէջ , Թէոֆիլ Կոթիէ բանաստեղծը
սապէս կը սահմանէ անկապաշտ լեզուն :
« Դիւրին բան չէ սակայն պատուելիօրէն
(pedant) արհամարհուած այդ ոճը : Վասն զի
անիկա կը բացատրէ նոր գաղափարներ՝ նոր
ձեւերով ու բառերով՝ զոր դեռ նոր կը լը-
սենք : »

« Հանճարեղ , կնճռոտ , զիտուն , երան-
գաճոխ ու խռկարկութիւններով լեցուն է
ան , որ կը հեռանայ միշտ լեզուին սահման-
ներէն , փոխ կ'առնէ բոլոր բառաբաններէն ,
գոյներ՝ քաղելով բոլոր երանգապնակներէն ,
խաղեր՝ բոլոր ստեղծարարներէն , ջանալով
արտայայտել ինչ որ ունի մտածումն՝ ամէ-
նէն անճառելի , ու ձեւը իր ամէնէն տար-
տամ , ամէնէն խռատիւրկ չըջագիծներուն
մէջ , կ'ունկնդրէ ան , զանոնք թարգմանե-
լու համար , ջլախախն նրբին մտերմութիւն-
ները , խոստովանութիւնները հինցող կիրքին
որ կ'ապականի , եւ անհնթեթ բանգագու-

շանքները հաստատուն գաղափարին՝ որ յի-
մարութեան կը միտի : Անկապաշտութեան
այս ոճը՝ վերջին բառն է բանին՝ նեղը ար-
ուած՝ արտայայտելու ամէն բան , մշուած
գերագոյն չափազանցութեան : »

Այս երկու կարգի խեղատուութիւնները
առանձին ուսումնասիրութեան նիւթ կրնան
մատակարարել քննադատին : Մենք Տէմիր-
ճիպաշեանին պէս շատեր չունինք այդ պա-
տիւն արժանի : Իսկ բանաստեղծին համար ,
որ մեծագոյն յաւակնութիւնն է Նիրվանայի
երգիչին , գիտեմ թէ քննադատութեան անու-
ղորմութիւնը պիտի կրնար արդարանալ :
Շըրլանակի վարպէ ցրտափայլ հոնդերձանք
մը , պիտի կարելի ըլլար ըսել իր ներշնչական
ցրտաշնչութիւններուն արտայայտութեան մե-
ծագոյն մասին համար : Տէմիրճիպաշեանին
համար պիտի կարելի ըլլար ըսել թէ բանաստեղծ
մըն է , որ չի կրնար յուզել , որովհետեւ ,
այն յուզմունքները զոր կ'ուզէ թելադրել իր
ընթերցողներուն , ցրտացած , ստուած են հաս-
նելով իր ախտաւոր ջիւերուն միջոցաւ մին-
չեւ իր սիրտը՝ որ մահուան ցուրտ կարօտով
է բռնուած :

Ընդհանրապէս Պօտըլէոեան լարի մը վրայ
Ռիչըէնեան կնանտոց մը փորձած է , ներքինին
(fond) եւ արտաքին ձեւի (forme) անյաջող նու-
նութեամբ : Զինքը իրրեւ բանաստեղծ նկատու-
ղութեան առած պահուս , գաղափարներու
զուգորդութեամբ , կը խորհիմ նաեւ իր տա-
ղտափութեան եւ իր ոտանաւորներուն :
Մինչդեռ իր արձակը փոխն ի փոխ հեղատահ
առուի մը քնքուշ ու նաղոտ ոչրանքները ,
արաբական նժոյգի մը ջլապիրկ ճկունութիւնն
ու քահալէժ գետի մը թաւալուն ընթացքն
ունի , իր ոտանաւորները կազ մուրացկանի
մը ողորմելի կտրուուքներով ու սայթա-
քումներով կը յաղկանշուին : Տէմիրճիպաշ-
եան այն բանաստեղծն է որ դրած է մոմա-
նակիս ամէնէն անախորժ ու զժուարընթեանի
ոտանաւորներէն , միշտ աղտոտուած գրաբարի
գարշելի éclaboussureներով , ու միշտ աւելի
աւելի ու արձակուակ քան իր արձակը՝ որ
երբեմն կշռական արձակ մըն է :

Նիրվանա ըսի , ու խորհեցայ թէ այդ
բառն ալ , եթէ ոչ անոր գաղափարը՝ որ քի-

չերու ըլլալու է ծանօթ , յատկանիշ մը եղած է մեր մէջ՝ եղիայի անունին : Կը հարցնեմ ինքնին, Տէմիրճիպաշեանի պատժապահանութիւնն արդեօք անձնակա՞ն կեանքի ու տպաւորութիւններու ծնունդ է՝ թէ մտքի ու բանավարութեան համոզում : Նրկու պարագային ալ վտանգաւոր է այդ բացասական կրօնքը , եւ դատապարտելի մանաւանդ՝ երբ խորհինք թէ եղիան տպաւորուած մըն է աւելի քան մտաւորական մը իր ներվանապաշտութեան մէջ :

Բայց ի՞նչ է այդ ներվանան՝ որուն առնէր այնքան միամիտներ հմայած է մեր մէջ :

Բոլոր միւս երեւոյթներուն նման, կեանքը , որուն ձեւին մէջ երեւան կու գանք մենք , համայնական անէութեան մը ծոցէն դուրս չեղումն է : Անէացումն է միայն ճշմարիտ եւ օրինաւոր իրականութիւնը : Կեանքը , ներկայացում մը (représentation) , պատրանք մըն է , ու ցաւ մը՝ քանի որ փորձ մը , ճիգ մը կ'ենթադրէ դուրս ելելու՝ անէութեան օրինաւոր չափիցն : Ներվանան այն միջոցն է որով մարդ ինքզինքը անէութեան ծոցը դրկելու կը յաջողի :

Rentre dans le néant que la vie a troublé ! Լքօնդ աը Լիլի հիւանալի բացատրութեան համեմատ :

Տէմիրճիպաշեան անկե՞ղծ է իր դաւանանքներուն մէջ . կէտ մը՝ որ իր բարոյական մարդու կշիւը որոշող պարագաներէն պիտի լլար : Ես պիտի ըսէի մանաւանդ թէ իր այդ կատակներուն մէջ նա աւելի կը փնտռէ զրական փառասիրութիւններու պատրուակ մը եւ ուրիշ ոչինչ : Վասն զի Տէմիրճիպաշեան անտանելի ետամուլ մը , զաւեշտական ունայնալիտ մը եւ եղկելի ինքնագով մըն է . չափէն աւելի դիւրապագաց է ուէքլամին նկատմամբ եւ անսահման սէր ունի մեծադժուրդ փողարութիւններուն համար , բաներ որ ապահովարար շատ վնասած են ու պիտի վնասեն դեռ իր բարի համբաւին , որ նախապաշարում մըն է իր կարգին : Նորոյթներու մոլութիւնն ալ , զոր ունի , յաղթական միջոց մը եղած է իր հիւանդոտ անունին շարքը փայլեցնելու , մեր դիւրահաւան հառարակութեան աչքերուն : Դեռ բան մը կը մնայ ,

թերեւս ըսուելիք առաջին բանը՝ այս տխուր ու մթին մարդուն համար , որուն անունը այնքան քաջքուքի ու կատակի պատրուակ մը՝ որքան դովետտի ու անլարկազերծութեան պարուգայ մը պիտի մնայ ապագային համար .— Տէմիրճիպաշեան՝ հիւանդ մը , ջլախտաւոր մըն է : Զգայնութիւնը՝ որ երբեմն մեծ թրեւու շարժառիթն է , բնախօսական նոր վարկածի մը համաձայն , մեծ տպէս վնասած է իր տաղանդին , եւ ջիւերուն գերագորգը ուսկան դիւրապագածութիւնը կը վախճում որ Տօն-զիջօթական համբաւ մը չլինէ իրեն օր մը :

Վերջապէս գեղեցկութիւնն մըն է ան , բոլոր անժխտելի հեշտական հրապոյրներովը թունաւոր աղբորութիւններուն , որուն վրայ կրնայինք երբեմն հիանալ այլ զոր պէտք չէ բնաւ սիրենք , զոր պէտք չէ որդեգրենք յաւէտ , կ'ըսեն անոնք որ կը մտածեն թէ կեանքը արգաւանդ ու մեծ երեւոյթ մըն է զոր կ'արժէ ապրիլ ընդհանրապէս :

Յ. Գ. — Այս յօդուածը գրած էի արդէն , երբ եղիա Տէմիրճիպաշեան՝ իր աղտոտ լեզուին ծայրովը փողոցային անմաքրութիւններ ցայտեցնել ուղեց կօշիկներուս վրան , իր «աղցաւոր» լի ցաւազարութիւններուն մէջ :

Այսօր նորէն սնդիփոխ հրատարակութեան կուտամ այդ յօդուածը , այս քետ — գրութիւնը միայն աւելցնելով :

Դիտէի որ , Զօհրապին ջղուտ բացատրութեան համեմատ , Տէմիրճիպաշեան պարուլուած օգապարիկ մըն էր ալ . բայց չէի գիտեր թէ իր հոյակապ անխմաստութիւնը օր մը պիտի յոռեչրջուէր համբակ ջրհանկիրի այս անմաքուր լեզուանիութիւններուն : Իր ջղայնութեան տարապայման առաջացման , իր խելագարութեան paroxysmeին մէկ ակտանիլը միայն կրնամ նկատել՝ իրեն նկատմամբ եղած քննադատութիւններուն դէմ աղտոտ բառախաղութիւններով պատասխանելու այս նոր ձեւը : Սրամոռութեան այդ ստորհաճաշակ հնարքները քիչ մը չափէն աւելի զգուշիկ կը դարձնեն զինքը : Տէմիրճիպաշեան հինցած գրագէտ մը , քայքայուած իմացականութիւն մըն է այսօր ու խելացիութիւնը իր կողմը պիտի մնար նորէն՝ եթէ իմաստուն լուծեան

մը մէջ անաղարտ պահել ուղէր իր բարի համբաւը, որ այլեւս բղկառած է սակայն, և զոր կարկտելու յուսահատ ճիգ մըն է իր այսօրուան ըրածը՝ գրականութեան պատրուակով : Ասոնց բոլորը ուրիշ վտանգ մըն ալ կը սպառնան իրեն : Այդ սպառնալիքը՝ ամէնէն սոսկալին, ամէնէն կործանարարն է, — իր բարոյական մարդու համբաւին վնասող սպառնալիքն է ան, վտանգ չէի զիտեր թէ՛ Տէմիրճիպաշեան իր քննադատներուն դէմ աղտոտ քննախնդրութիւն մը և անպատիւ միջոցներ ի դործ դնելու հերոսական քաջասրբութիւնն ալ պիտի ունենար օր մը :

Ասոնք որ իր այս անհեթեթութիւններու անիմաստութիւնները կ'ուզեն արդարա-

ցընել զինքը հիւանդ հռչակելով, իրաւունք ունին. ասոնց հետ մենք ալ սակայն իրաւունք ունինք ըսելու թէ՛ այդ տեսակ հիւանդները, եթէ կ'ուզեն յիշօրէն օգտակար ծառայութիւն մը ընել իրենց անձին ու իրենց հասարակութեան, լաւ կ'ըլլայ որ հիւանդանոց մասնին ու ինքզինքնին դարմանել տան՝ քան զբաղին զրչի աշխատութիւններով որոնց համար չեն այլեւս. և յետոյ հրատարակութեան պատասխանատուներ թող ժողովուրդին չի ներկայացնեն այդ տեսակ գրուածքները : Պէտք է ալ վերջ դանն մեր Եղիա մարգարէին որոտընդոսս գոռաձայն տառկանութիւնները, որոնց վրայ այնքան կը հիւնայ ինքը, և որոնք մտածուած, օգտակար գրականութեան մէջ իրենց տեղը չունին :

Վ. ԱՐԴԱՎԱՐՈՒ

ՎԱՐՁՔԴ ԿԱՏԱՐ...

(ՆՈՐԱՎԷՊ)

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԱՆ

ԱՌՏԻԿԻՆ Ս...



Ա.

ԱՐՄՐՈՒԿ արեւով ծնած օր մըն էր, Վարդապետի աղուորիկ կիրակի մը, հաւաքուած էինք մեր տան պատշգամին վրայ, չորս հինգ տղաք թաղէն, պղտիկ ընկերուհի մը՝ Բուրուլ, ու ես, ամէնքս ալ եօթէն ութը տարեկան :

Մարդ պիտի թրջէինք այն սուտուն :

Հին աւանդութիւն մը՝ դարէ դար եկած մինչեւ մեր օրերը հասած՝ չարաճճի թախ մը կ'ու տար մեզի՝ թրջելու մէկդմէկ, թրջելու անցորդները եւ յաճախ նայն իսկ ինքզինքնիս լեցուն, երկարատեւ քրքիչով մը՝ ուրկէ տղու միամիտ հոգին կը շաչէր :

Գրեթէ արեւծագին հաւաքուեր էինք

մեր տունը՝ որովհետեւ ամէնէն յարմարն էր իր բարձր պատշգամով, ու մայրս՝ մեր պղտախի մարդու պահանջին գոհացում տալու բաւազատուած, տաշտ մը ջուր հաներ էր վեր՝ պատշգամին վրայ, ու թիթեղէ մէջ մէկ աման տուած էր ամէնուս, կիներն ու մանաւանդ թաղին մարդիկը չթրջելու խոստում առնելով :

Ու խեղ եղնորդներու պէս մագլցած էինք սանդուխներն ի վեր, ահաղին պոռլտուքով մը որ բերնէ բերան աւելի սուր չլտ մը կ'ուռնէր, այլազան խառնուրդ մը՝ ձեւացուցած ամէնքս ալ, տարբեր հագուստներով, որբերիս բապիկ, չաւերնիս կիսամերկ, գառնուկներու խումբ մը կարծես՝ որ մօրը ստինքներուն կը փութար խառնակ մայրնաներով :

Ամբողջ ժամ մը պէտք եղած էր վերջ

պատշգամբին վրայ՝ որպէս զի տղու յատա-
կաքիմ մը պատրաստէինք աղու կռուի մը
համար զոր պիտի մղենք մենք ալ չէինք
դիտեր որո՞ւ դէմ, եւ որ հակառակ անշուն
բան մը ըլլալուն, մեծ կարեւորութիւն ստա-
ցած էր մեր քով: Ամէնէն յանդուգնը իրենց
մէջ եւ իրրեւ հիւրասիրող, գլուխին անցած
էի այդ աւիւնոտ մարտիկներուն, ու շաղա-
կրատ ճռուողիւնէ մը ետքը բաժնած իւ-
րաքանչիւրին դերը ու որոշած ամէն մէկուն
կենայիք տեղը: Տաշար՝ պատշգամբին մէջ-
տեղը դրած էինք եւ ամէնուս ալ ձեռքի
թիթեղէ ամանները լեցուն էին ջուրով:

Մարդ պիտի թրջէինք, ի՞նչ աղուոր
բան:

Արեւը՝ ոսկի գունտ մը՝ մաքուր, զմ-
բոլստ երկինքի մը գողէն տաքը առատ կը
մայէր ու մեր խեղճ տոտիկները կ'այրէին
կրակաւ՝ զինկոյէն որով պատշգամբին էին
յատակած: Եւ հով մը՝ տկար ա՛յնչափ, որչափ
հեւքը հիւսանդ կուրծքի մը, թալկոտ՝ գաղջ
շունչ մը՝ կը տարտղնէր, այն տաք հոսանք-
ներուն պէս զորս այրուող տան մը բոցերը
կարծակեն:

Բայց տաք չէր որ կը զգայինք. որո՞ւ
հոգ՝ եթէ զինկոն կ'այրէր ոտքերնիս: Մարդ
պիտի թրջէինք, ի՞նչ աղուոր բան:

Ու խօլ յանկերգ մը՝ անխորհրդաբար
կազմուած մեր կողմէ՝ խօսքի մը պատառը՝
օրուան տօնական անունին կցուած, կը թռչ-
կոտէր բերներնուս, աղու հնչիւն խազով մը
որ յանկարծ կը ժայթքէր, կը կրկնուէր ու
կը մարէր թուլ ընդլայնում մը առնելով:

Վարդավա՛ւ,

Վարձքդ կատար . . . :

Տաքը կը խղզէր ձայներնիս եւ վրանիս
ծանրացող թուլութենէն՝ յանկերգը կը մա-
թէր տակաւ, քիչ մը ետքը նոր թափով մը
վերսկսելու համար:

Ամէնքս ալ վար կը նայէինք, աչքեր-
նիս ուղղած դէպի զառիվայրին ծայրը՝ խու-
ղելով խազան ու քարուտ ճամբան, եզեր-
ուած անհաւասար տուներով, որոնց առջին
հոս հոն բարձրացող քանի մը ծառերու տե-
րեւները քարացածի անշարժութիւն մը կը
պահէին:

Ոչ ոք կու գար սակայն:

Յուսահատ սպասում մըն էր որ կ'ընէինք
հոտ, ջուրով լեցուն թիթեղէ ամանները
պատրաստ բռնած, գլուխնիս հակած պա-
տշգամբին եզերքն ի վար, ու մեր խօլ յան-
կերգը բերաննիս:

Վարդավա՛ւ,

Վարձքդ կատար . . . :

Մարդու մը շուքն անգամ չէր երեւար
նորէն, ու նոյն խակ փողոցին շուները տեղեր-
նուն չէին շարժեր, թմրած տաքէն՝ զոր ա-
րեւը բուռնով կը մաղէր:

Բայց անպատճառ մէկը թրջելու էինք:
Խօլ փափաք մը՝ որ մեր անպտուղ սպա-
սումէն սրուած՝ պէտք մը կը դառնար տա-
կաւ. աղու այն անդիմադրելի պէտքերէն
մէկը որոնց անհրաժեշտ գոհացում մը տալու
է, ի՞նչ կերպով ալ ըլլայ:

Եւ սկսած էինք իրար ջրել, նախ ափով
ջուր սրսկելով մէկ մէկու վրայ, որպէս զի
հագուանիս չթրջեր. յետոյ՝ մեզմէ մէկը ան-
բաւական գտած էր այդ միջոցը, ու թիթե-
ղէ ամանը գործածած. ամէնքս ալ հետե-
ւած էինք իրեն, ու շատ չանցած ամէն մէ-
կերնուս հագուստը մարմնին կպչած էր:

Տաշտին ջուրը կէս մը սպառած էինք.
պէտք էր լեցնել, որովհետեւ մարդիկ կրնա-
յին անցնիլ փողոցէն:

Իսկոյն ամէն մէկը իր նախապէս ունե-
ցած դիրքին մէջ կեցուցի եւ սկսայ վար իջ-
նել՝ մօրմէս ջուր խնդրելու:

Երկար աշխատեցայ զայն համոզելու
համար. վերջապէս համակերպելու վրայ էր
ու թերեւս պիտի խօտանար դոյլ մը ջուր
վեր բերել՝ ձեռքի աշխատութիւնը վերջա-
ցնելէն ետքը, երբ ստիպուեցայ կրցածիո
չափ շուտ պատշգամ վազել:

Բուբուլը կը լացնէին, իմ պզտիկ ընկե-
րուհիս կը լացնէին: Ա՛խ տղու պզտիկ սէրե-
րը, տղու անո՛ւշ օրերը:

Ի՞նչ չար ըլլալու էին, Աստուած իմ. . . :

Էրիկ մարդու գերազանցութեան զգա-
ցումը կարծես արթնցած իրենց մէջ, հինգ-
տղաքն ալ զրօսանքի առարկայ մը ընել ու
զեր էին « իմ մենենիկ Բուսֆուլ » ինչպէս
սորվեցուցած էին որ ըսէի, — օրօրօցէն նը՝

չանուածներ էինք, — ու խեղճը բաւական
թրջեղէ, հոս հոն հրեղէ ետքը՝ վայրի փա-
փաք մըն էին յղացած :

Կ'ուզէին ջուրը նետել զայն՝ պառկեցնել
տաշտին մէջ, ու ջուրին դողը տորթել :

Ինչո՞ւ արդեօք . . . :

Երբոր պատշգամբը հասայ, գրեթէ բան
մը չէր մնացած իրենց փափաքին իրակա-
նացման :

Խենթի պէս կը գոռային ամէնքն ալ .

— Բուրուլ, բուրուլ, ջուրին մէջ բու-
բուլ, բուրուլ . . .

Ա՛յն անախտանները :

Աղւար կռիւ մը սկսաւ մէջերնիս, ճըշ-
մարիտ՝ գրեթէ մեծ մարդու կռիւ մը՝ ձեռ-
քով ոսքով ու թիթեղէ ամաններով :

Հինգի դէմ մինակս էի, ի՞նչ կու գար
ձեռքէս :

Բուրուլը կու լար :

Ու կը պաշտպանէի ինքզինքս, աջ ու
ձախ տեղացնելով պզտիկ թաթերուն հար-
ուածները՝ անցո՞ր կռուիներ . մէկի դէմ եր-
կուք կ'ընդունէի թէեւ, բայց կը դիմանայի
վերջապէս :

Կ'ուզէի տեղի տալ, սակայն խաղնոտ
վարանում մը ոյժ կու տար ինծի . ինչպէ՞ս
անպաշտպան ձգէի Բուրուլը որ կու լար :

Տաշտը՝ չրջեցաւ յանկարծ մեր կռուած
միջոցին ու գրեթէ միեւնոյն պահուն՝ մեզմէ
մէկը՝ որ աչքին կերած հարուածով մը
քաշուած էր կռուէն, պռուալ սկսաւ .

— Մարդ մը, մարդ մը . . .

Կռիւը դադրեցաւ իսկոյն :

Առջի աղաքն էինք դարձած, իրերասէր
ընկերներ, պատրաստ մարդ թրջելու, ի՞նչ
աղւար բան :

Բայց ջուր չունէինք :

Տաշտին մէջ գտնուածը թափած էր ամ-
բողջովին ու զինկոն ի վար սահելով դացեր
լճացեր էր անկիւն մը, հետը տանելով բու-
լոր փոշիները պատշգամբին որոնք սեփ սեւ
խառնուրդ մը դարձուցած էին զայն . գրե-
թէ ձահիճ մը՝ աղտոտ ու լղրճուկ :

Եւ սակայն ջուր պէտք էր անպատճառ .
առտուրնէ ի վեր սպասեր էինք, ու հիմա
որ առիթը կը ներկայանար մեր խօլ փափա-

քին դահացում տալու, միջոցը չունէինք
ձեռքերնուս տակ :

Ի՞նչ ընել : Վարէն ջուր բերելու ատեն
չի կար . մարդը կրնար անցած ըլլալ մինչեւ
մեր վերադարձը :

Յանկարծ դադարար մը՝ ունեցայ, Հրա-
մայեցի որ պատշգամբին անկիւնը լճացած
ջուրը ժողվէն իրենց թիթիղէ ամաններով եւ
անմիջապէս տաշտին մէջ լեցնեն :

Գաղանի պէս ինկան ամէնքն ալ մօրա-
ցած ջուրին վրայ : Քանի մը վայրկեանէն՝
տաշտը լեցուած էր կիսովին սեւ ու աղտոտ
խառնուրդով մը՝ որ ջուրէ աւելի տիղմի կը
նմանէր :

Վարանելու ատեն չի կար :

Մարդը՝ կարճուկ, տկուր ու տարիքոտ
մսակոյտ մը՝ սեւ վերարկուով եւ արդուկ-
ուած ձերմակ բաճկոնակով մը՝ որուն վրայ՝
մէկ գրպանէն միւսը ոսկի շղթայ մը երկա-
րած էր, ճիշտ մեր դրան առջեւն էր հա-
սած, ճնշուած տաքէն ու քրտինքով ողոր-
ուած :

Վեցս՝ մէկ՝ վերցուցինք տաշտը տեղէն
եւ ակնթարթի մը մէջ պատշգամբին եզրը
տանելով ձիւղ մարդուն վրայ թափեցինք
այն սեւ հեղուկը՝ որ պատշգամբին աղտն ու
փոշին ծծած էր :

Սուր ձայն մը՝ Գը՛ը՛ը՛ մինչեւ վարը ըն-
կերացաւ ջուրին, մինչդեռ յիշոցներու մէջ
խեղդուած կատաղութեան մը արտայայտու-
թիւնը դէպի մեզի կը պոռթկար փողոցէն :

Մուկերու պէս պահուրտած էինք պա-
տրջգամին չորս կողմը, սպասելով որ անցոր-
դը հեռանայ : Քիչ ետքը տեսանք զայն, եւ
ի՞նչ ալ խեղճուկ երեւոյթով մը :

Աղտոտ ջուրը՝ պուտիկ պուտիկ կը կաթ-
իլթէր իր նոսրէնոր հաղուստներուն վրայէն .
կը սրտիար խեղճը, կը թոթոռուէր երրեմի՝ ու
գլուխը կախ, եկած ձամբէն ետ կը դառնար
հայհոյելով, մինչդեռ մենք՝ ամէնքս՝ պահ-
ուրտած տեղերնուս ելած՝ տղու հնչիւն ձայ-
նով մը մեր անվերջանալի յանկերդը կը շա-
չեցնէինք .

Վարդավա՛ւ ,

Վարձքդ կատար . . . :

Բ.

Մեզմէ երկու երեք տուն վեր՝ Հանքու-
եաններու ընտանիքը կար, տգէտ, խման
մարդ մը, կինը եւ աղջիկ մը՝ զոր Նազիկ
կ'անուանէին :

Թաղին թերեւս ամէնէն աղուոր ու ամէնէն
զարգացած աղջիկն էր, հրապուրոտ ժպիտ մը
միշտ շրթունքէն անպակաս՝ սեւօսկ աչքերու
պճտուն հայուածք մը որ չէնք շնորհք կը
գերէր, կը թափէր, ու դէմք մը՝ խնձորի
պէս կլոր, նուռի չափ կարմիր :

Սէր մը ունեցած էր այդ աղջիկը, —
թաղեցիները կը պատմէին, — եւ ատոր իսկ
պատճառաւ շատ դժբաղդ եղած էր, — միշտ
դրկից կիները կ'ըսէին :

Դպրոցական ընկեր մը՝ Մկրտիչ՝ վառ-
վռուն եւ ուսեալ երիտասարդ մը,
դարպաս ըրած էր իրեն. կարեւորութիւն
չէր տուեր նախ, սակայն օր մը տեսած էր
որ միեւնոյն հոսանքը զինքն ալ լռեցած է.
ան ատեն ուզած էր խոստափիլ. բայց ճիշդ
այն պզտիկ թիթեռնիկներուն պէս՝ որոնք
շարունակ լամբարին շուրջը կը թեւածին մին-
չեւ որ այրած իյնան, շարունակ փնտռած
էր զայն, գտնուելով այն տեղերը՝ ուր անի-
կա կը յաճախէր. Օր մը հասկցած էր թէ
կը սիրէր Մկրտիչը ու կը սիրուէր անկէ :

Ի՞նչ աղուոր ընտանիք մը պիտի կազ-
մէին :

Բայց Նազիկ բնաւ չէր մտածած հօրը
վրայ :

Երիտասարդին մայրը՝ առաջին դիմուկէն
իսկ մերժումի մը հանդիպած էր անոր կողմէ,
ընտանքակտելի մերժում մը՝ զոր ի զուր
պիտի ջանային խորտակել :

Մարդը հաց բերող փեսայ մը կ'ուզէր.
իրեն ի՞նչ օգուտ կրնային ունենալ այդ եհնի-
կեքիկները ինչպէս որ կ'ըսէր :

Եւ դժբաղդ կեանք մը սկսած էր խեղճ
աղջկան համար՝ որուն ամէն մարդ կը համա-
կրէր թաղին մէջ ու կը մեղքնար այն սիրուն
երիտասարդութիւնը՝ որ արցունքով կը խա-
թարուէր :

Բայց կ'ատէի ես այդ աղջիկը ու Բու-
րու ալ կ'ատէր :

Անոր այդ նեղսիրտ օրերուն մէջ՝ իմ մի-
նինիկ ընկերուհիս չեմ յիշեր ի՞նչ էր ըրած ի-
րեն, պզտիկ տղու անգիտակից արարք մը
անշուշտ, առանց ո՛ր եւ է չարութեան՝ որ
սակայն պատճառ եղած էր Նազիկէն ծեծ մը
ուտելուն, եւ ի՞նչ ալ ծեծ մը . . . :

Երէկուան պէս միտքս է դեռ :

Տունէն դուրս կ'ելլէի Բուրուը փնտը-
ռելու՝ երբ տեսայ զինքը որ կուլար սիրտ
բզբոտ լացով մը, մաղերը խզուած՝ կար-
մուկ, թոմպուկիկ թաթիկները աչքերուն,
վրան գլուխը խառնակ :

Իսկոյն քովը վաղեցի, ուղեցի գրկել
զինքը որպէս զի շուտ տուն տանիմ, բայց
ոյժս չբաւեց. գիրուկ աղջիկ մըն էր այն ա-
տենն ալ :

Սիրտս կը պրկուէր կուրծքիս տակ. ի՞նչ
կրնար ըրած ըլլալ այդ անվնաս աղջիկը՝ որ
այդչափ զինքը ծեծեր էին. ո՞վ էր արդեօք
ծեծողը :

Բոլոր ասոնք կը հարցնէի իրեն մեր
պարաէզին մէջ՝ ուր տարած էի զինքը գրեթէ
բռնի, ծաղկուտ ածուներուն քովիկը՝ փայտէ
նստարանի մը վրայ, շահագրամներու եւ մե-
խակներու տարտղնուք մը չորս կողմը, ու
վրանիս՝ տարածուն ճիւղերով յասմիկի ծառ
մը՝ որուն ճերմակ ծաղիկները իրիկուան սիւ-
քերէն գետին կ'իյնային ճիշդ այն ձիւնի խո-
շոր փաթիլներուն պէս՝ զորս սուր հով մը
տանիքներու վրայէն խլելով վար կը թափէ :

Կը հեծկտար խեղճ աղջիկը, կտրատ
ձայնով մը պատմելով իր յանցանքը, որ թե-
րեւս չա՛տ աննշան բան մը ըլլալուն համար
միտքս չիյնար այսօր :

Կը յիշեմ միայն այն բոլոր ջանքը՝ զոր
ըրի իմ պզտիկ ընկերուհիս ցաւը մոռցնելու
համար :

Մաղերը կոկեցի խնամուտ հիւսուածքով
մը, — որչափ որ կրնայի — ես որ օր մը
օրանց հոգ չէի տարած ճակատս ի վար իյնող
մաղերս գէթ մատնելովս վեր վերցնելու :

Ծաղիկներ քաղեցի պարտէզէն, հոտաւէտ
մէլիսէներու մէջ առի զանոնք եւ փունջ մը
չինեցի. գրեթէ համբրութեան հրաշք մը՝ իմ
ծոյլ բնաւորութեանս նայելով :

Շուտ մը վեր-վաղեցի, պատկերներ բե-

բերուէ, ամէնքն ալ դպրոցը նոյն օրուան դասերու միջոցին ձեռք բերուած, եւ իրեն տուի այդ թուղթի կտորները՝ որոնք սակայն իմ հպարտութիւնս դժուող միակ առարկաներն էին :

Սոստումներ ըրի՝ յաջորդ օրն ալ շատ մը պատկեր բերելու, եւ որովհետեւ դեռ լացը չէր կտրէր՝ աղու մտածումով մը սկսայ աչուրները համբուրել, որպէս զի չկարենար լալ :

Յաջողած էի վերջապէս :

Գրեթէ հօթնական տարու էինք երկուքս ալ :

Այն օրէն ի վեր երկուքս ալ ատել սկսած էինք Նազիկը, պզտիկներու այն սոսկալի ատելութեամբ՝ որ ամէնէն անկարեկիրը ու ամէնէն անխիղճն է :

Կռուիս ցուցուցած էի անոր, ամէն անգամ որ պատուհանին առջեւ տեսած էի, դէտած վրէժ լուծելու իրմէ, ես ալ չէի գիտեր թէ ի՞նչ կերպով :

Այդ վրէժս սակայն՝ օր մը ինքնին լուծուած էր գրեթէ մասամբ :

Նազիկի հայրը, Համբարձում աղա, զաւառացի թեկնածու մըն էր գտած իր աղջըկան համար, վաշխառուի աղտոտ տիպար մը, անվստահ երեւոյթով, գրեթէ յիսունը թեւակոխած, տգեղ՝ կապիկի մը պէս ու օձի մը չարութիւնը ուրախացնող դէմքով մը՝ որուն վրայ պիտեան ու յօնքերը ներկուած էին :

Մարդը հարուստ էր սակայն եւ Համարձում աղա իրար անցած էր չփախցնելու համար այդ պարարտ որսը՝ որ բովանդակ թաղեցիներուն խօսակցութեան միակն առարկան դարձած էր եւ որուն զաւուստին կը ոպասէին օրէ օր չեղաուող անհամբերութեամբ մը :

Այդ տեսքը սակայն չէր կրնար դիմել վարակել, աղաքը միշտ տղայ կը մնան նոյն իսկ ամէնէն ծանր պարագաներու մէջ, Մեզի ի՞նչ հոգ Նազիկի դժբաղդ ըլլալը, տարիքոտ ամուսին մը առնելը, ըստ ասոնցմէ բան մը չէինք հասկնար ու լսածնիս կը մոռնայինք վայրկեանապէս : Ինծի ու Բուբուլին համար գոհացում մը կար մանաւանդ այդ դժբաղդութեան մէջ. բնաւ չպիտի մոռնայինք մեր ոխը : Սակայն իմ այդ ատելութեանս մէջ ամէ-

նէն սաստիկ հարուածը ես ինքս կրեցի՝ երբ Բուբուլ ինծի պատմեց կարգ մը բաներ՝ զորս տունէն լսած էր :

Բուբուլի թեկնածուն՝ ճիշդ այն կարծելուկ, տկուր ու տարիքոտ մտակոյտն էր՝ որուն վրայ պատշգամին սեւ ու աղտոտ ջուրը թափած էինք վարդավառի կիրտկին, խենթ յանկերգը բերաննիս :

Վարդավառ,

Վարձք կատար . . . :

Մարդը մէյ մըն ալ թաղ չէր եկած :

Ու կ'ըսէին թէ Նազիկ երջանիկ էր կէս տաշտ ջուրին այդ արդիւնքէն՝ ուրկէ ինք օգտուած էր ամէնէն աւելի :

Բայց ես չէի ուզեր որ ատանկ ըլլար. կ'ուզէի որ մինչեւ վերջը լար, պուար, ամանջուեր, թէեւ Բուբուլ, — բարի աղջիկ, — ներած էր շատոնց այն ծեծը՝ որ միաքէս չէր ելլէր բնաւ :

Ինքզինքս կ'ուռէի գրեթէ. որովհետեւ իմ իսկ ձեռքովս երջանականալուն պատճառ եղած էի մէկու մը՝ զոր անդիտակից թէեւ, բայց խոր ատելութեամբ մը կ'առէի :

Ա՛խ, աղու սիւրը . . . :

Գ.

Մէկ երկու ամիս վերջն էր, իրիկուն մը մայրս շաքար բաժնեց մեզի, հարանիքի շաքար, իխնիլի ամէնքն ալ՝ գրեթէ արքայութիւն մը :

Ինծի ամէնէն շատ տուաւ, որովհետեւ անանկ պատուիրեր էին :

Ո՛վ էր ուրեմն հարսը : Ա՛խ, երանի թէ չըսէին բնաւ :

Նազիկ՝ կրցած էր մօրը օգնութեամբ հայրը համոզել, իր սիրած երիտասարդին՝ Մկրտիչի հետ ամուսնանալու համար :

Բան մը չէի հասկնար թէեւ ատկէ, սակայն այն ընկերի կեանքը՝ զոր կ'անցընէի Բուբուլին հետ, կը դգայնէր ինծի թէ աղուոր բան է սիրով ապրիլը, սէր մը՝ որուն վրայ գաղափար անգամ չունէի :

Մեզի կ'ըսէին թէ իրար շատ կը սիրէինք. Բուբուլին հետ եւ թէ աղուոր բան մը կը նէինք : Ուրեմն Նազիկ ալ ատանկ պիտի

ընէր, ինքն ալ պիտի զգար այն սիրուն հա-
նոյքը՝ զոր եւ կը զգայի միշտ Բուրուլին քով
ըլլալով :

Շատ մեծ եղայ այն օրը՝ օ՛հ, աղէկ կը
զգամ :

Այն մտածումը թէ ես իմ իսկ ձեռքովս
անուշ կեանք մը ստեղծած էի Նազիկին,
կ'ուռնեցէր սիրտս :

Աչքերս լեցած էին, գրեթէ շատ մօտ
յորդելու : Բայց ի՞նչպէս լալ այդ սենեակին
մէջ՝ ուր ուրիշներ ալ կային իղմէ զատ : Զէ՛,
ես իմ ցաւս ոչ մէկուն պիտի զգացնէի : Կու-
ղէի մինակս տանջուիլ, նոյն իսկ առանց
Բուրուլին :

Զէ՛ մի որ անիկա արդէն մոռցած էր
Նազիկին զէմ ունեցած ռիւր :

Ու պարտէղին մէջ՝ ճիշդ այն փայտէ
նստարանին վրայ՝ ուր Բուրուլի արցունքներն

էի չորցուցած քանի մը ամիս առաջ, եւ ուր
այս անգամ ձմեռը շատ կանախներ թափած
էր, կուլայի խենթի պէս, կուլայի անմխի-
թար : Գուրս տալ պէտք էր այդ ատելու-
թիւնը որ սիրտս կը ճմլէր :

Շաքարները՝ այն իխիւրդի շաքարները, —
գրեթէ արքայութիւն մը մեզի համար, —
ձեռքս էին դնու : Օ՛հ, հատ մը անգամ չպի-
տի ուտէի անոնցմէ :


Մտածելի նետել պարտէղին մէկ անկիւ-
նը եւ հող ցանել վրան, որպէս զի մարդ չը
տեսնէր :

Բուրուլը միտքս ինկաւ սակայն : պիտի
ուրախանար այդ ափ մը շաքարը տեսնելով :
Ի՞նչ կ'ըլլար, ինքը ներած էր Նազիկին :

Եւ անոր առիւ ամէնքն ալ, առանց բը-
նաւ ըսելու թէ ուրիշ՝ կուգային անոնք :
Տղու սէրն էր, տղու օրեր, ինչո՞ւ այս-
չափ շուտ անգամ :



Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Մ Ը



Dr. Մ. Վ Ա Հ Է



Ր Հ Ա Մ Ա Ր Հ Ա Ն Ք Ս յայտնե-
լու համար այն ողորմելի,
քննադատական ոգիէ բա-
ցարձակապէս զուրկ յօդ-
ուածի մասին, որ երեւցած

է ինձ ցարդ անծանօթ մի հանդէսի մէջ,
ընդդէմ գրած գրաքննականիս Տոքթ. Տա-
ղաարեանի «Ծննդական Գործարանք» գրքին
վրայ, եւ որ «Կեսար» ստորագրութիւնը կը
կրէ, անշուշտ լաւադոյն պիտի լինէր պար-
զապէս անգիտանալ անոր գոյութիւնը եւ
լուծութիւն պահել : Սակայն մտածելով թէ
լեւս կարող էր տարբեր կերպով մեկնուիլ
մեր ժողովրդի ընթերցող դասակարգէն, ո-
րուն մէջ, ցաւալի է ըսել, դեռ քիչեր կա-

րող են անկախ կերպով դատել եւ մեծամաս-
նութեամբ ենթարկուած են անհարկուած
յօդուածագրին նման անպատրաստ, գրական
միակողմանի եւ այն ալ շատ թեթեւ մշակում
առած անձերու ազդեցութեանը, հարկ հա-
մարեցի այս յօդուածով մի անգամ եւս ի վեր
հանել Տոքթ. Տաղաարեանի գործին օգտա-
կարութիւնը ժողովրդական առողջապահու-
թեան տեսակէտով :

Բուն նիւթին անցնելէ առաջ, աւելորդ
չեմ համարիր, սա դիտողութիւնը ընել, թէ
մեր ազգային զարգացման տեսակէտով փա-
վաքելի եւ ալ ժամանակ էր, որ գրական
առարկէի մէջ մտնողներ, հիմնական ուսում
առած, լուրջ եւ ձեռնհաս մարդիկ լինէին եւ
ոչ թէ մի որ եւ է աննշան վարժապետ, կամ
մի որ եւ է տաղաչափող, որոնք ընկերական
եւ ազգային նիւթեր մշակելու բացարձակա-

պէս անկարող եւ դրականութեան ուղղութիւն տալու, կամ գոնէ անոր մի քանի կարեւոր գործեր նուիրելու ձիրքէն բոլորովին զուրկ, վարժապետութենէ խմբագրութեան, խմբագրութենէ վարժապետութեան կ'անցնին մի լարախաղացի կատարեալ առաձգականութեամբ, ի հարկէ առանց օգտակար կարենալ լինելու ոչ միայն եւ ոչ միւսին: Ասոնք իրենց փքոցուող ոճով եւ հայհոյանքներով ժողովրդին գրական ճաշակը կը խանգարեն եւ փոխանակ անոր հոգին եւ մտքը ազնուացընելու, ուղղակի կը նպաստեն որ անկաշարունակէ մնալ իր բրտութեան եւ անտաշութեան մէջ:

Մենք իրեւ հայ կը ցաւինք այս չափ տխուր երեւոյթին վրայ եւ ճիշդ այն տպաւորութիւնը ունինք, որու տակ պիտի գըտնուէր անձ մը, որ սրահի մը մէջ մտնելով տեսնէր հոն հոժ թաղմութիւն մը նստած ծանր օդին մէջ եւ զարմանալով պիտի հարցնէր ամէնուն թէ ինչպէս այդ մարդիկ չեն զգար տիրող դարձահոտութիւնը: Կեսարի հասցէին միանգամ ընդ միշտ այսչափ: Ինձ պատմեցին թէ մի արեւցող, թեթեւադիմ մարդ է, մի տափակ միտք եւ թոյլ հոգի, ուրեմն մի անձ որ արդէն գիտնական տեսակէտով չէ կարելի իրեւ բոլորովին նոսրացնել, այնպէս որ իր անձով աւելի երկար զբաղիլ միայն մի շահ կարող էր ունենալ, այն է արտաբանականը: Իսկ այդ բանը ընել բնականաբար նպատակէս դուրս է այստեղ:

* * *

Ամէն հայ բժիշկ եւ ամէն չափահաս Արեւելքցի գիտէ, թէ մեր երկրին մէջ սեռային կեանքը ունի իր մուրտումները որոնք ոչ աւելի հազուադէպ են եւ ոչ ալ կը տարբերին Արեւմուտքի մէջ եղող ծանօթ մուրտումներէն: Մեր մէջ չկայ այսօր մի կին կամ չափահաս աղջիկ որ այս մասին լսած չլինի: Բայց ինչ որ շատեր թերեւս չգիտեն, սա է թէ սեռային անբնական յարաբերութեանց մի մասնաւոր ձեւը անհամեմատ աւելի ընդհանրացած է Արեւելքի մէջ քան Եւրոպայի, ինչ որ մեր բարքերու կարծեցեալ մաքրութեան վրայ նպաստաւոր գաղափար մը չէ:

կարող տալ: Այս մասին այնքան գէշ համբաւ ունին Արեւելքցիք Եւրոպայի մէջ եւ այնքան նողկանք ազգած են անոնց, որ թերեւս անոնք այդ մուրտութիւնը իրո մեր կեանքի շատ ազեղ կողմը մէջ նետէին:

Գոյութիւն ունեցող մուրտութիւնները մարդ միայն երկու պայմանով կարող է անդիտանալ. կամ ահամայ, պարզմտութեամբ եւ կամ կամովին, կեղծաւորութեամբ, եւ այն անձը որ այս բանը կ'ընէ, առաջին պարագային մէջ արգահատելի է, երկրորդին մէջ պարզապէս արհարմարհելի: Զազրեկին թաքուցանելու համար եղած ջանքերէն ոչ մի օգուտ չի կայ ժողովուրդին համար: Ազնուութիւնը ծածկելով մաքրուած բլաւ կարծել կատարեալ միամտութիւն է եւ ծիծաղելի. ու անոնք որ այս կ'ընեն, ճիշդ այն կնոջ կամ էրիկ մարդուն զիրքին մէջ կը գտնուին, որոնցմէ առաջինը իր ճերմակեղէնի աղտոտութիւնը յայտնուէր զգեստով կը գոցէ եւ երկրորդը մարմնոյն դարձահոտութիւնը անուշահոտ իւղով խափանել կը ջանայ:

Այսպէս կը մտածէ ամէն ողջամիտ մարդ. եւ այն բժիշկը որ քաջութիւնը ունի իր ժողովուրդին այս վէրքերուն վրայ մատը դնելու, ամէն յարգանքի եւ համակրութեան արժանի է:

Տոքթ. Տադուարեանի գրած տողերը ծննդական գործարաններու եւ առհասարակ ամբողջ մարմնին մաքրութեան վրայ շատ հրահանգիչ են եւ փափաքելի է որ մեր ժողովրդէն հասկցուն եւ գործադրուն, վասն զի շատ ցաւալի է ըսել, թէ մեր մէջ մաքրութիւնը սխալ ըմբռնուած ամօթխածութեան յաճախ գոհ կ'երթայ եւ շատ ճամբարիտ է որ մեր հայուհիները ծննդական գործարաններու խնամքը եւ մաքրութիւնը առհասարակ կ'անտեսեն: Պէտք է նայիլ ծննդական գործարաններու վրայ ինչպէս կը նայինք մեր ուրիշ գործարաններուն վրայ, այսինքն առանց նախապաշարման: Մինչդեռ մեր տղայ հասակէն մեզ փոխանցուած մի զգացում, նախապաշարումի ձեւին տակ, ցոյց կուտայ թէ տգիտութիւնը ո՛ր աստիճան հզօր է տակունքի եւ ինչքան ամուր կերպով կը բռնանայ մեր ըմբռնումին եւ դատողութեան վրայ:

նոյն խակ ա՛յն տարիքին մէջ, ուր միտքը արդէն հասած կը նկատուի իր կտորարեալ անկախութեան : Տոքթ. Տաղաւարեանի թուած սեռային մոլութիւններուն եւ ոչ միոյն համար կարելի է ըսել, թէ գոյութիւն չունի Արեւելքի մէջ, եւ եթէ նոյն խակ դռնուէին այն պիսիներ, որոնք միայն եւրոպա գոյութիւն ունենային, այդ մի պատճառ չէր որ չափահաս անձեր այդ մասին մութի մէջ պահուէին : Աւելի հզօր է այն մարդը, որ չարէն կը խորշի չարին կտորարեալ գիտակցութեամբը եւ բարիին կը յարի, բարոյն համար դգացած անկեղծ սիրովը : Այս է համոզումս, եւ այս տեսակէտէն նայելով Տոքթ. Տաղաւարեանի գործին վրայ, օգտակար կը համարիմ զայն մեր ժողովուրդին համար :

Խմբ. Ծանօթ. Անցեալ անգամ պըզտիկ դիտողութեան մը մէջ ակնարկած էինք մամուլի հրապարակին վրայ գըտնուող այն թերուսները, որոնք իրենց խելքը չի հասած ամէն բանի մէջ կ'իյնան, մեր հասարակութեան նման անպատրաստ միջավայրի մը մէջ, յաճախ վնասակար անձեր դառնալով :

Ասոնցմէ, կ'երեւայ ամէնէն աւելի զգածուեր է մէկը որ ոչ միայն թերուս չէ այլ և ունի բարոյական և հոգեկան փխուր յատկութիւններ, որոնք զինքը յաշտ խղճամիտ և ազնիւ զգացում կրող

իւրաքանչիւր անհատի, դուրս նետուելու արժէքը միայն բնի :

Ու այս անձն է, որ դիմակի տակէ — մեզ համար թափանցիկ — թոյն կը ժայթքէ մեր աշխատակից և իրեն անձանօթ յարգելի Տոքթ. Վահէի դէմ, և իրեն թոյլ կուտայ կարգ մը խօսքեր ուղղել խմբագրութեանս հասցէին, որոնց մէջ, հակառակ իր միտքն ու հոգին պատող թանձր մութին, կը նկրտի մինչեւ անգամ, Տոքթ. Տաղաւարեանի հրատարակած վերջին երկասիրութեան առթիւ մեր գրած տողերը, անկեղծութեան տեսակէտէն կասկածի տակ ձգել : Մեզի համար պարկեշտութեան, ու խղճամտանքի մասին խօսիլը շատ վեր է «Կեսար»ներու հասկացողութեանէն : Ասոնք մակաբոյծներն են մեր հասարակութեան, որոնք արբեցութեան, անբարոյականութեան և սեւ հոգի արարքներու մէջ կ'անցընեն իրենց օրերը, իրենց յոսնութենէն ջանալով լորձունք ժայթքել խղճամիտներու և պարկեշտներու վրայ : Բայց ձեր լորձունքը չի հասնիր մեզի, որովհետեւ դուք՝ շատ, խիստ շատ վար էք մենէ : Այստի առաջին և վերջին անգամ ըլլալով ձեզի համար :





ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՔՏԱՆ. — Բանաստեղծութիւններ, Հրատարակութիւն Տիկ. Երանուհի Տեր-Գրիգորեանի. Թիֆլիս, Տպգր. Տ. Մ. Ռոտինեանց, 1899.



Ա.

ԽԶՊԷՍ յայտնի է նախորդ յօդուածէս, Դերենիկ Դեմիքտեան բազմը ունեցած էր մեծահերու այն երանելիներու շարքին մէջ՝ որոնց Մուրճ «ճանաչուած» տիպարը առած էր եւ զորս պէտք էինք զաւանիլ Ռուսահայոց արդի իսկական բանաստեղծները՝ նոյն իսկ Հանդէսին յանձնարարութեամբ։ Առջի յօդուածիս մէջ թերեհաւատութիւն յայտնած էի Մուրճի այս գնահատման վրայ, թէ եւ առանց հակառակը պնդել կարենալու. սակայն այսօր, ձեռքի տակ ունենալով Դեմիքտեանի բանաստեղծութեանց հատորը, առանց այլ եւ այլի կրնամ ըսել թէ Մուրճ շատ անխորհուրդ յանձնարարութիւն մը բրած է այդպէսով՝ քանի որ մտքիս մէջ չեմ կրնար հաշտել զրեւել նա գաղափարը թէ իրեն պէս Հանդէս

մը կրնայ անպիտանալ այն բոլոր յատկութիւնները՝ որոնցմով հեղինակ մը կրնայ իսկական բանաստեղծ մը համարուիլ։ Այս ըսածիս իրր ասպարոյց, քիչ մը ետքը երեւան պիտի հանեմ այլանդակութեանց այն կոյտը՝ զոր բանաստեղծը «թխած» է իր ոտանաւորներուն մէջ, բայց անկէ առաջ պիտի ներուի անշուշտ որ զարտուղութիւն մը ընկելով ծանրանամ կարող մը կէտերու վրայ՝ զորս ըսելու յարմար առիթը ներկայացած կը կարծեմ։

Անանկ ասեմ մը՝ ուր Արեւմտեան եւ Արեւելեան Հայոց ժողով ձգտում մը կայ գրականագէտ իրար հասկնալու, երկու տարբեր ուղղութեանց օրաթերթերուն եւ հանդէսներուն վրայ կը ծանրանան փոխադարձ պարտքեր՝ զորս պէտք չէ անտեսել։ Աւելի չնդելու համար նիւթէս, չեմ ուզեր առանձինն ներկայացնել հոս այդ պարտաւորութիւնները, որոնց պիտի վերադառնամ առաջիկային. առայժմ սա ըսեմ թէ գրական երկու ուղղութեանց մէջ ալ դիտակից ընդունելութիւն մը չ'ըլլար ուղղակի աշխատակիցներու վերաբերմամբ։ Փորձով տեսանք արդէն թէ կովկասի մէջ գովեստները քիչ չէ որ կը

արուին , բայց անկեղծ ըլլալու համար պէտք է ըսենք թէ մեր մէջ ալ խոսնկն ու կնդրուկը առատ կը շռայլուին ընդհանրապէս , չօրպահի լինանքնու թեմա մը՝ որ սակայն կը ամբի բոլորովին երբ խնդիրը նիւթական վարձատրութեան դառնայ (*) : Ինչպէս ըսի , այս կէտին վրայ ըսելիքներս կը վերադառնամ առաջիկայ յօդուածի մը՝ ուր պիտի աշխատիմ՝ եթէ ոչ լիակատար զէթ բաւարար բաղդատութեան մը ենթարկել այն ընդունելութիւնը՝ զոր Ռուսահայոց ու մեր թերթերը կ'ընեն իրենց աշխատակիցներուն , յուսնել այդ ընդունելութեան վատ կողմերը եւ ամփոփ հետեւութեան մը մէջ պարզել անկէ առաջ գալիք բոլոր հետեւանքները : Հիմա ես կ'անցնիմ ուրիշ կէտի մը՝ զոր երկու ուղղութեանց մերձեցման համար ամէնէն էականն ու կարեւորը կը նկատեմ : Ռուսահայերն ու մենք՝ զրականապէս իրար հասկնալու համար նախ պէտք է որ մէկզմէկ ճանչնանք . բան մը որու մասին մինչեւ հիմա թերացած ենք անիմաստ անտարբերութեամբ մը : Առանց դիտաւոր մեղմէ իւրաքանչիւրին զրականութեան ծնունդ տուող ազդակները , առանց ուսումնասիրած ըլլալու երկու զրականութեանց բնաշրջման երեւոյթները եւ մանաւանդ առանց թափանցելու այն ուղղութեան՝ որուն անոնք կը ձգտին , անկարելի է որ իրար ճանչնանք , հասկնանք իրարու գրականութիւնը ու կարենանք գնահատել : Այս

փոխադարձ ծանօթացման գործը ամէնէն աւելի կ'իյնայ հանդէսներուն՝ որոնք իրենց աշխատակիցներուն պէտք է ստաղծներ մատակարարեն այս փոխադարձ ուսումնասիրութեան մասին , կարենալ յանդելու համար արդիւնքի մը՝ որ զրական տեսակէտով ամէնէն հայ եւ ամէնէն օգտակար ու սիրուն բաներէն մէկը պիտի ըլլայ (**) : Մենք պէտք է որ Ռուսահայերուն զրականութիւնը ուսումնասիրենք եւ անոնք ալ մերինը . այլապէս զրեթէ անկարելի պիտի ըլլար անկողմնակալ , անկեղծ գործ մը երեւան հանել , քանի որ ամէն գրող՝ ուղղակի իր միջավայրը ուսումնասիրած պահուն կրնայ ունենալ կարգ մը անձնական եւ կամ ուրիշ հաշիւներ՝ զորս քչել պիտի ուղէ այդ աթիւ , ինչ որ լաւ հետեւանք մը չէ որ պիտի ունենայ :

Բայց սպասելով այդ ատենին , երկու զրականութեանց պատկանող հանդէսներն ալ պէտք է քիչ մը աւելի անկեղծ ըլլան՝ իրենց աշխատակիցներու մասին . պէտք է առանց չափազանցութեան եւ առանց չարի ներկայացնեն զանոնք , բոլորովին մէկգի թողով այն պաղիրկեանի գովեստները՝ որոնք որչափ ալ փրցուն եւ անհիմ ըլլան՝ դարձեալ կրնան իրենց ազդեցութեան բաժինը ունենալ ուսումնասիրողին վրայ : Այս տեսակէտին մէջ ես չառ լաւ չէի գտած Մուշեղի ընթացքը , եւ նախապէս ըսածներս ապացուցանելու համար է միայն որ կը զբաղիմ Դէմիրճեանի հատորով՝ որուն պարունակած անիմաստութեանց վրայ ուրիշ պարագայի մը մէջ չպիտի արժէր ծանրանալ : Կովկասի զրականութեան մէջ իր կատարած մեծ դերին եւ Ռուսահայոց արդի դրոշներուն մէկ կարեւոր մասին դռն թեմա պատճառը ուղղակի ինք ըլլալուն համար , չա՛տ աւելի դիտակից , չա՛տ աւելի անկողմնակալ դատողութեանց կը սպասէինք Մուշեղն : « Դերենիկ Դէմիրճեանի ստանաւորների մէջ երեւում է զգայմունքի խորութիւն եւ անկեղծութիւն , որոնք դարձ

(*) Դեռ շարք մը ատաղ , Բիւզանդիոնի խմբագրութեան կողմէ մեծագոյրոյ յայտարարութեամբ մը կը ծանուցուէր թէ թերթին զրական պատուակալ (! ? ?) աշխատակիցը՝ «Ատրուշան» Հալլի գտցեր է (ինչ մեծ բան , Աստուած իմ!) եւ թէ սրանչէլի նկարագրութիւն մը պիտի գրէ Մարմարայի ասիւրներն : Այդ ինքնակոչ գրողէն՝ որ իր գրութիւնը անհրաժեշտ ուղղութեամբ կը պարտի , գլխովէն շնորհք բան մը սպասելու իրաւունքը ունէինք այս յայտարարութեանէն ետքը . եւ սակայն՝ որոշեալ օրը «Ատրուշան» ստորագրութեամբ դպրոցականի շարադրութիւն մը միայն երեւցաւ , որուն մէջ յօդուածագիր պարոնը ինչպէս աւանակի վրայ հեծած ըլլալը կը նկարագրէր , եւ որ կերեւայ թէ ճամբան կորնցուցած ըլլալով խմբագրատուն մը ինկած էր՝ փոխանակ ուղղութեամբ Բերայի Արեւեստանոցը՝ ուր Շրջանաւարտներու քննիչ Յանձնաժողովը՝ շրջանաւարտներու նագերէն ձանձրացած՝ աչքը չորս բացած էր քննութեան առարկայ մը գտնելու համար :

Ա. Ա.

(**) Այս մտքով՝ Մասիսի առաջիկայ թիւերուն մէջ պիտի հրատարակենք լիակատար ուսումնասիրութիւններ՝ Ռուսահայ ծանօթ գրողներու վրայ՝ ինչպէս Ղազարոս Աղայեանց , Վրթանէս Փափագեանց , Շիրվանզատե , Մուրազյան եւայլն , իրենց պատկերներով միասին : ԽՍԲ.

նում են հեղինակին մի խկատիպ բանաստեղծ» . Մուրճ այս առդերով ծանուցած էր ներկայ հատորին հրատարակուիլը . սակայն պիտի տեսնենք որ այդպէս չէ :

Բ.

Անգիտակից , անխմտ ու ծայրայեղութեան համառոտ յոռետեսութեամբ մը թաթաւուն ոտանաւորներ են՝ որոնց մարդ կը հանդիպի Դէմիրճեանի Բանաստեղծութիւններուն մէջ , խնամտ տպագրութեամբ ու բաւական լաւ թուղթով ձերմկուկ հատոր մը՝ որուն մէջ 25 ոտանաւորներ սղմեցուցեր է հեղինակը : Այդ յոռետեսութիւնը բնաւ չպիտի ուղէի դատափետել , եթէ երբեք Դէմիրճեան ջղուտ իմաստ մը դրած ըլլար անոր մէջ , արամբարանորէն ըստած կեանքի որոշ ըմբռնումի մը յանդէր . ընդհակառակը՝ միօրինակ , անփոփոխ ton մը կը տիրապետէ ահոր վրայ , հասկացողութիւնը թմրեցնելու աստիճան տաղտկացուցիչ միօրինակութիւն մը՝ որ ոտանաւորէ ոտանաւոր գրեթէ միեւնոյն հետեւութեան կը յանգի՝ յաճախակի կրկնութիւններով : Լալկան բանաստեղծութեան յաւիտեական նիւթերուն վրայ զրուած են ամէնքն ալ , ծանօթ նիւթեր արդէն՝ հազար ու մէկ անգամ յեղեղուած՝ որոնց վրայ անօգուտ է ծանրանալ : Այս տեսակէտով միակ նոր բանը եթէ կայ հատորին մէջ , ուրիշ աշխարհի մը բաղձանքն է՝ որ կ'արտայայտուի երկու երեք ոտանաւորներով :

Տարբրինակ , արտաւարդ բաներ ըսելու խնթ փափաք մը ունի Դեմիրճեան՝ որ սակայն այլանդակութեան կը տանի զինքը . կտորներ կան իր հատորին մէջ՝ որոնցմէ բնաւ բան չի հասկցուիր . իր արտաստեղծութիւնը ոտանաւորներով ընդհանրապէս սիրոյ վրայ կը խօսի , սէր մը որ չափազանց կը զբաղեցնէ զինքը . բայց տեսէք ի՞նչ դաժաւար ունի անոր վրայ .

Աէրն ի՞նչ է , վայելքն ի՞նչ է , —

Սեւ ու դափնի օձ է նա . . .

Ում սրտում որ բոցն զնէ՝

Նա պիտ խոցելի՛ , սեւանայ . . .

Սէրը , դարնան օձ է ,

Հեռու , շա՛տ կ'խայթէ քեզ . . .

Ահա սիրտս սեւ ու խոց է . —

Ա՛խ սեւ շա՛տ եմ լացել ես . . .

Ռուսահայ մը թերեւս հասկնայ այս ոտանաւորը , ինչպէս նաեւ յետագան՝ որովհետեւ , իրենք , զլխաւոր գաղափարներու շուրջ երկրորդական մատածումները կրճատելու վարժուած՝ զիւրաւ կրնան այդ երկրորդական մատածումները զլխաւոր գաղափարին յօդով կապերը գուշակել , մինչդեռ մենք , զլխաւոր՝ ինչպէս նաեւ երկրորդական գաղափարները նոյնքան յստակօրէն արտայայտելու վարժուած , յաճախ չենք իսկ ըմբռնել այս տեսակ կրճատումներով ընդլուգուած առդերու իմաստը :

Խոժոռ նայում է աչնան զիշերը . . .

Քամին դուռ-կրդիք ծեծում է , ծեծկում .

Անձրեւն է շաչում , հետն էլ իմ սիրտը՝

Վիրաւոր , ախո՛ւր բաղխում է , զարկում . . .

Դո՛ւռն էին ծեծում , — այդ ո՞վ է ծեծում ,

Կորած թռչնի՛կս է , արի՛ ներս արի՛ . . .

Քամին էր ծեծում . . . ա՛խ սիրտս է ծեծում ,

Այդ սէ՛րս է , սէ՛րս , նա՛ է , քո՛ւն չունի . . .

Շատ կտորներ կան դեռ ասանկ , տարաբնույն ու հոս ու հոն , զրչի եկած խօսքեր , անմտած առդեր ամէնքն ալ , որոնց մէջ իմաստ մը գտնելը թերեւս նոր Ամերիկա մը գտնելն ալ դժուար ըլլայ՝ նոյն իսկ արդի ժամանակներու ընձեռած միջոցներով . Յաճախ՝ առդեր առդին յարմարացուցած ըլլալու եւ խուսափող յանդ մը գտնելու համար դրուած բաներ են , իրարու հակասող , իրար չէզոքացնող կարծիքներ , ու մանաւանդ պատուէրներ՝ որոնցմէ առատ ունի ինքը : Յետոյ միշտ հինցած խօսքեր կը սիրէ կրկնել , տափակցած՝ փոփոխած աստեղծներ , որոնցմով կ'ոգեւորուի , եւ հետեւութիւն մը հանել ուղիով կ'իյնայ անկ ճամբու մը մէջ՝ որ անխմտութեան կը յանգի : Իբր օրինակ մէջ կը բերեմ հետեւեալ երկու տուները .

Զգո՛յշ կաց , կ'անցնին այս տարիները ,

Առաջ կ'նայիս , — ծերութիւն ու մա՛ն .

Ինչ որ կարցնեա՛ էլ այն օրերը

Յետ չե՛ն ապ , կանչեա — էլ յետ չի՛ դառնայ :

Սովորականը թօթափի՛ր քեզնից ,
Ընարի՛ր քո ուղին եւ տառ'ջ դնա .
Եւ եթէ դժգոհ կ'լինիս կեանքից՝
Անողո՛ք կուր եւ մեռա՛կ մնա . . .

Բայց այդ անխորհուրդ արտադրութեան,
զրածին անգիտակցութեան ամէնէն հրաշալի
ապացոյցն է հետեւեալ ոտանաւորը՝ որով
Դերենիկ Դէմիրճեան ինքզինքը կը ներկա-
յացնէ .

Մանկուց անհաշիւ եմ ներդրի՛րա ու կոպիտ ,
Ու երբ զայրոյթս հոգիս բռնկէ՝
Օձ պիտի դառնամ , ես պիտի խայթե՛մ . —
Ու քիչ էլ ճամբաս մուր է դուցէ . . .
Բայց վէս ճակատոս գետնին կը դնեմ
Երբ դէմս ելնես ո՛վ ճշմարտութիւն .
Ես քո սարուկն եմ , կոպիտ բանւորդ եմ ,
.
Հպարտ արծիւդ , սէգ թմրկահարդ ,
Ես քե՛զ իմ գալիս խաւարի խորքին . . .
Կ'ուզէի գառնալ աղաղիլ (?) դամբադ . —
.

Այս տեսակ մէկը կարծեմ թէ իրաւունք
չունի չտիրուելէն դանդատեալու :

* * *

Յուսահատի փնտռուք մը պէտք եղաւ՝
քանի մը լաւ բան գտնելու համար Դէմիր-
ճեանի Բանաստեղծութիւններուն մէջ , ուր
հազիւ երկու օտանաւորներու՝ «Օտար Դա-
րուն»-ին եւ «Երգ»-ին մէկ քանի մասերը
կրնան յաջողած համարուիլ , ինչպէս նաեւ
«Երբ վառ դարունն է»-ն՝ որուն ամբողջու-
թեան մէջ տաք եւ հեղինակին համար ան-
սովոր աւելն մը կայ՝ թէեւ նիւթը անխմաստ
կը մնայ միշտ :

Գալով Դէմիրճեանի յանդերուն՝ Աստ-
ուածաշունչի Ղազարոսէն ալ աղքատ են
խեղճերը . քանի մը գոհար մէջ բերեմ անոնցմէ,
եթէ երբեք կ'ուզէք դադափար մը ունենալ .
«չողերը = սաւերը» , «խոխոջուս = սօսա-
փում» , «այնտեղ = մի տեղ» , «սէրից = թոյ-
ներից» , «ունի = չունի» , «սիրաւ = սէրը» ,
եւայլն :

Աս է ահա Դերենիկ Դէմիրճեանի հա-
տորը՝ զոր աւելի չեմ քրքրեմ՝ իրենց գերեզ-
մանային հանգիստին մէջ չվրդովելու համար
այդ վիժած քերթուածները՝ զորս Մայր-Մու-
սան մեռած ծներ է :

Յ. Գ. — Մաւիւսի խմբագրութիւնը ինծի
յանձնեց նաեւ բանաստեղծութեանց ուրիշ
հատոր մը՝ «Քերթուածներ»՝ որ Պոլիս տպուած
է , Ախթէրի տպարանը , եւ որ երեք հեղի-
նակի անուն կը կրէ . Յակոբ Յազոյեան ,
Յակոբջան եւ Աշուղ Յակոբիկ : Այս ամենա-
ողորմելի , հրէշային ու դերադանցապէս տա-
փակ գրուածքին վրայ ակնարկութիւն ան-
գամ չպիտի ընէի , եթէ անոր մէջ չըլլար
ոտանաւոր մը ուր հեղինակը կամ հրատարա-
կիչը՝ Սմբատ Դաւթեան , աննման գաղափարը
յղացած են աստուածացեալու Դաւթեան գոր-
ծակալութեան հրատարակութիւնները՝ Քե-
րական , Ընտելարան , եւայլն , սապէս տո-
ղերով :

Հապա դո՞ւն , չըսե՞ն , ի՞նչ կը կարդաս ծօ՛ւ .
— Ես ալ կը կարդամ Փոռնջ , Հաւաքածոյ :

Ոտանաւորներով ուէքլամ տեսած էինք
արդէն , բայց բանաստեղծութեան գիրքի մէջ
ուէքլա՛մ իրաւ որ Ամերիկացիներն անգամ մաս
պիտի խածնեն : Գալով դրքին միւս քեր-
թուածներուն , ահաասիկ նմոյշ մը .

Յաւի՞ս առտուն երբ տխրածայն

Կը կարկաչէ (! ? ?) լաց ընդունայն , եւլն :

Ծաւալով մեծ թերթի մը , — որ հայ
թերթ մը ըլլալը հասկցնելու համար «հայա-
թերթ» անունը կրելու պէտք ունի ճակատին
վրայ , — ծաւալով մեծ խմբագրապետը՝ բարի
սովորութիւն մը ըրած է իրեն ահագին «չի՛ւշ»
մը գրել փորձերուն վրայ՝ ամէն անգամ որ
գրաշարները խոշոր սխալ մը չարած ըլլան :
Շիտակը ըսելու համար պիտի փորձուէի աշուղ
Յազոյի «կարկաչող լաց»-ին քով այդ բառը
դնել՝ եթէ երբեք քաղաքավարութիւն ըսուած
բան մը՝ զոր կ'երեւայ թէ կ'անգիտանայ վե-
րոյնչեալ թերթին յարգելի խմբագրապետը ,
չկասեցներ զիս :

Ա. Ա.

Յ Ո Ր Ե Լ Ն Ա Ն

Պ. ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆԻ

(Պատճեն յայտարարութեան)

Տոնձային զրականութեան եւ դաստիարակութեան բազմամեայ մշակն՝ Պ. Մամթէոս Մամուրեան, իր տկարութեան առթիւ եւ բժշկաց խորհրդով՝ պարտաւորուած է թողուլ իր սիրած աշխատութիւններն եւ հանգստութեան մէջ անցընել իր բազմաբեղուն կենաց ծերութեան օրերն :

Պ. Մամուրեանի կեանքն բեղմնաւոր է ամեն տեսակէտով, թէ՛ զրական աստղաբիշի մէջ եւ թէ՛ դաստիարակութեան : Սակայն այդ կեանքի ուսումնասիրութիւնն չէ՛, որ պիտի ներկայացնենք մենք այժմ, այլ՝ դործունէութեան արդեանց մի համառօտագիր պատկերն՝ 1850 թուականէն սկսեալ :

Պ. Մամուրեան Տեսուչ կարգուած է Կ. Պօլսոյ Խաղիւղի Ներսիսեան վարժարանին . Հիմնադիր եղած է Կ. Պօլսոյ Հայոց Պատ. րիարքարանի դիւանական կարգադրութեան, որոյ հասուցած պաշտօնականներէն է այսօր՝ նշանաւոր դիւանադպիր Բարթող Էֆ. Թէլեան :

Պ. Մամուրեան նախկին « Ծաղիկ » թերթի խմբագրութեան մասնակցութենէ զատ՝ յիշմիր եւ ի Կ. Պօլսոյ, այսօր շուրջ 30 տարի է, որ կը հրատարակէ « Արեւ . Մամուլն » :

Պ. Մամուրեանի զրական երկասիրութիւններն բազմաթիւ են՝ վիպական, նամակագրական, թարգմանական, թատերական, մանկավարժական, պատմական, իմաստասիրական, եւլն :

Պ. Մամուրեան Խաղիւղի վարժարանի Տեսուչութենէն զատ՝ 1867 թուականէն ի վեր անընդհատ դաստիարակութեան պաշտօն վարած է ի Զմիւռնի, Մեսրոպեան եւ Հոփիսիմեան վարժարանաց մէջ, որպէս Տեսուչ եւ Ուսուցիչ գիտութեանց եւ լեզուաց :

Այս արդիւնաշատ Մշակն այսօր դործէ կը քաջութի բժշկաց խորհրդով, բայց իր զրական երկերն սիրողներու եւ իր բազմաթիւ աշակերտներու սրտերն չեն քաջութի իրմէն : Նոքա միշտ իրեն հետ են՝ մաքով, սրտով եւ հոգեով, զի քաջ գիտեն թէ՛ ո՛չ միայն բա-

նիւ, այլեւ զրչով պաշտպանած է Հայոց եկեղեցական իրաւունքներն . պաշտպանած է կրթութեան եւ կրթարանաց կարեւորութիւնն պաշտպանած է ժողովրդի բարոյական գոյութեան օգուտներն : Միով բանիւ պաշտպանած է ամեն բան, ինչ որ բարի է, օգտակար եւ ճշմարիտ . եւ այս պաշտպանութեան համար կրած է շատ զոհողութիւններ, որ ամէն ճշմարտասէրներու թէ՛ բաժինն է եւ թէ՛ մխիթարութիւնը :

Արդ՝ մի այսպիսի քրանաթոր եւ բազմարդիւն Մշակի զրական եւ դաստիարակական Յօդուանն ածնելու համար՝ կը յայտարարուի թէ իր զրադիտական հանձարն զնահատողներու եւ երախտագէտ աշակերտներու վաղուց տածած փափաքանոց համաձայն՝ յատուկ մասնախումբ կազմուած է վիճակիս Ազաջնորդ Տ. Մելքիսեղեկ Սրբազան Հօր նախադահութեամբ :

Մասնաժողովոյ անդամք են՝

Տ. Յովն. Բնյ. Մինասեան, Յակոբ Վէմեան, Տէր Յարութիւն Բնյ. Եղիվարդեան, Խոսրով Նիքիւմ, Ստեփան Սպարթալի, Յակոբ Տէր Դասադարեան, Գ. Յ. Բարադեան, Աւետիս Տիվրիկեան :

Յօդուանի հանդէսը պիտի կատարուի յառաջիկայ Հօկոմեմբեր 17/29 կիրակի օր :

Դրամական եւ այլ նուէրներ, հետադիրներ, ուղերձներ եւ ամեն տեսակ թղթակցութիւնք, որք պիտի արձանագրուին եւ տպա մասնաւոր Տեղեկագրով հրատարակուին, կ'ուղղուին Ս. Նախադահին հետեւեալ հասցեով .

Տ. Մելքիսեղեկ Ս. Արքեպիսկ. Մուրատեանց Իզմիր :

Monseigneur Melchisedec Mouradianz Smyrne

Իզմիր 1 Յուլիս 1899.

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինճանճլար Եօզուու, Կ. Պօլս

Պատժարական Ֆայտարարութիւն Ազգային Պատրիարքարանի

Ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփայ Իզմիրեանց՝ Գրական Յանձնաժողովը կը հրաւիրէ Պատուարժան Հեղինակներն ու Բանասէրները, որ եթէ Ազգային Դպրութեան և Պատմութեան վերաբերեալ որ և է աշխատասիրութեամբ կը փափաքին մասնակցիլ Սահակ-Մեսրոպեան Գրական մրցման, փութան իրենց երկասիրութիւններն յուղարկել մինչև յառաջիկայ 1900 տարուոյ Յունուար մէկ՝ առ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրն ի Կոստանդնուպոլիս:

Տպագիր երկասիրութիւններն հարկ է որ երեք օրինակ լինին, իսկ ձեռագրերն մէկ օրինակ, որք՝ ըստ կանոնի ետ չեն դարձուիր:

Կ. Պոլիս, 16 Յուլիս 1899

Կ Ն Ի Ք

Ա.Զ.Գ. ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԺԹ. Տարեգրան 1899—1900

Վարժարանիս ԺԹ. տարեշրջանը կը սկսի յառաջիկայ (1899) սեպտեմբեր 1ին, և նորեկ աշակերտներու մուտքի քննութիւնները տեղի կ'ունենան օգոստոս 30ին և 31ին, իսկ դասերը կանոնաւորապէս կը սկսին սեպտեմբեր 1ին: Թոշակաւոր աշակերտներու ընդունելութեան պայմաններուն և ուրիշ տեղեկութեանց համար, ծնողք կամ պաշտպաններ կրնան հիմակուրէն դիմել Պոլիս՝ Ազգ. Պատրիարքարան և կամ Կարին՝ վարժարանին տեսչութեան: Յառաջիկայ տարուան համար ձրի աշակերտներու ընդունելութիւնը արդէն կատարուած ըլլալով, այդ մասին ո՛ր և է դիմում առանց հետեւանքի պիտի մնայ:

Կ Ն Ի Ք

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՆԱՆՍԻԻ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Այն ուսանողները, որոնք կ'ուզեն բժշկական մասնագիտութեան հետ տեւիլ, կը ծանուցուի իրենց թէ մտից քննութենէ ազատ պիտի ըլլան, երբ հետեւեալ կրթական հաստատութիւններէն միոյն վկայականովը ներկայանան. Կեդրոնական վարժարան, Պէրպէրեան վարժարան, Կալաթա Սէրայի Լիսէն և Ռոպէրթ Բօլէճ:

Մտից քննութենէ ազատ մնալու համար, բոլոր դիմումները պէտք է տեղի ունենան Կրթական նախարարութեան հասցէին, Բարիզ, ամէնէն ուշը մինչև եւրոպական 1 Հոկտեմբեր 1899:

Մանրամասն տեղեկութիւններ առնելու համար դիմել Նանսիի Համալսարանի բժշկական ֆաքուլտէի քարտուղարին:

Դատախօսութիւնները կը սկսին յառաջիկայ Նոյ. 3ին (Ն. Տ.):

Մեր աշխատակիցներէն ՇԱՆԹԻ (ԼԵՈՆ ՍԵՂՈՍԵԱՆ) հետեւեալ վե-
պերը առանձին հատորով կը ծախուին Մասիսի խմբագրատան մէջ :

ԴՌԻՐՍԵՑԻՆԵՐԸ	(1896)	217 էջ	7	Ղր.
ՎԵՐԺԻՆ	(1898)	220 »	8	»
ԴԱՐՁ	(1899)	144 »	5	»

Լ ՈՒ Մ Ա Յ

ԿԻՍԱՄԵԱՅ ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻՆ

Այս տարուան երկրորդ գիրքը հրատարակուեցաւ Գիւտ Աւագ-քահանայ
Աղանեանցի կողմէ : Տարեկան երկու գիրքերու գինն է 3 ռուբլի : Դիմել
հրատարակչի հասցէին՝

Tiflis, Archiprêtre Güt Aghaniantz.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ , ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒՆ

Կը խնդրուի ընդհանուր Ռուսահայ եւ Տաճկահայ հեղինակներէ ,
որպէս զի իրենց հեղինակութենէն հաճին երկերիւս օրինակ ուղարկել խմբագ-
րութեան , թերթիս տնօրէնին հասցէով : Խմբագրութեանս ուղարկուած
գրքերը թերթի կողքին վրայ պիտի ծանուցուին , եւ անոնցմէ շահեկան
բովանդակութիւն ունեցողներուն տարրալուծումը պիտի ներկայացուի ըն-
թերցողներուն :

ԺԱՄԱՆԱԿԸ ԴՐԱՄ Է

Ամէնէն աւելի այսօր ընդունուած է այն ճամբորդութիւնը թէ Ժամանակը դրամ
է : Ներկային մէջ պէտք է արագ երթալ , արագ ապրիլ , արագ վայելել , շուտով
հարստանալ եւ մանաւանդ արագ սովորիլ : Այս վերջին պարագային վրայ է որ մաս-
նաւորապէս կը ծանրանանք , յայտնելով որ անձ մը պատրաստ է , վեց ամսուան
մէջ հիմնական կերպով սովորեցնել Անգլիերէն եւ Գերմաներէն , չնորհիւ նորագոյն
գիտական դրութեանց : Մեր դարավերջիկ կեանքին մէջ ամէնէն կարեւոր կէտն է
ուսանիլ բան մը , անոր կարելի եղածին չափ քիչ Ժամանակ յատկացնելով , ատով
մեր ուրիշ մէկ գործին արգելք չըլլալու համար :

Մանրամասնութեանց համար դիմեցէք Մասիսի խմբագրատունը :

Նամակով դիմողներէ կը խնդրուի որպէս զի պահարանին երեսի վերի անկիւնը
«դասի համար» գրեն :



Ամառուան տաք օրերուն , զովանալու համար Տաճկա-
տանի մէջ ընդհանրապէս պաղ ջուր եւ օշարակ կը խմեն ,
բան մը որ զիրենք աւելի կը տաքցնէ , վայրկեանի ի դու-
թիւն մը միայն տալով : Տեւական զովութիւն ունեցողներն
կը յանձնարարենք գաւաթ մը թէյ , որուն պաղն ալ (thé glacé)
կ'ըլլայ ամառուան համար : Անոնք որոնք կ'ուզեն փորձել
թէյին զովացնող յատկութիւնը , թող գիմեն Կ. ԵՄ.ՎՐՈՒ-
ԵԱՆ Ե Յ. ԻՍՍԳՈՒՎԵՍՆ Թէյի վաճառատունը որ իր զանազան խառ-
նուրդներովը եւ գինի աժանութեամբ կը մրցի Տաճկաստանի մէջ գտնուած
բոլոր միւս վաճառատուններուն հետ :

Ուշադրութիւն վաճառատան մարքային :

Վաճառատունը կը գտնուի Կ. Պոլիս ձեւալ պէյ խանին ֆակ , քիւ 10